


«ՀԱՐՅԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ»

ՄԱՏԵՆԱՇԱՐ

Ա





Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԶԻ ԵՒ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

ԶԱՔԱՐԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՈՒՄՅԱՆ

100 ՀԱՐՅ

Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ



ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

2014

ՀՏԴ 265
ԳՄԴ 86.37
Զ 431

ԶԱՔԱՐԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՈՒՄՅԱՆ

Զ 431 100 հարց Ս. Հաղորդության մասին / Զաքարիա վարդապետ Բաղումյան.- Ս. Էջմիածին: Հեղ. հրատարակություն, 2014.- 108 էջ:

Ս. Հաղորդությունն Ընդհանրական Եկեղեցու սրբազան խորհուրդներից է, երբ Ս. Պատարագի ժամանակ սրբազործված հացի և գինու տեսքով ճաշակում ենք Հիսուս Զրիստոսի Մարմինը և Արյունը՝ ստանալով մեղքերի քավություն և թողություն: Այն կարևոր է յուրաքանչյուր քրիստոնյայի համար: Գրքում հարց ու պատասխանի ձևով անդրադարձ է կատարվում Ս. Հաղորդության խորհրդի կարևորությանը և նշանակությանը՝ ընդգրկելով հարցերի լայն շրջանակ:

Աշխատությունը նախատեսված է հոգևոր կյանքով հետաքրքրվողների և ընթերցասեր լայն հասարակության համար:

ՀՏԴ 265
ԳՄԴ 86.37

Տպագրվում է մեկենասությամբ

ՀՅՈՒՄԻՍՄԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ

ISBN 978-9939-0-1154-7 © Զաքարիա վրդ. Բաղումյան, 2014

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Որախալի է փաստել, որ վերջին շրջանում աշխուժություն և վերագարթոնք է նկատվում մեր եկեղեցական կյանքում, և ընդհանրապես մեծացել է հոգևոր կյանքի ու գիտելիքի նկատմամբ մարդկանց հետաքրքրությունը: Գովելի է, որ այսօր շատերը եկեղեցի են հաճախում ոչ թե ավանդույթի ուժով կամ պարզապես մոմ վառելու համար, այլ գիտակցաբար՝ գործուն մասնակցություն բերելով ծիսական արարողություններին, Ս. Գրքի սերտողություններին, փորձելով ծանոթանալ և հետևել Հայոց Եկեղեցու հաստատած կարգ ու կանոնին, ավանդություններին և նրա ուղղափառ դավանությանը:

Անհերքելի իրողություն է, որ գիտության զանազան ճյուղերի և հատկապես բարձր տեխնոլոգիաների աննախադեպ զարգացման այս հորձանուտում Աստծո պատկերով և նմանությամբ ստեղծված մարդ արարածը կրկին շարունակում է Արարչին փնտրելու, Նրան ճանաչելու և Նրան նմանվելու իր մշտամնա առաքելությունը և ձգտումը: Քանզի մարդկային կյանքն իմաստավորվում է հենց Աստծո հետ անմիջական հաղորդակցությամբ և հարաբերությամբ, որոնք աղանդորուն այլակերպում և պայծառակերպում են: Իսկ երկրային իրականության մեջ Տիրոջ հետ ամենասերտ հաղորդակցությունը կատարվում է Ս. Հաղորդության միջո-

ցով, երբ Ս. Պատարագի ժամանակ սրբագործված հացի և գինու տեսքով ճաշակում ենք Հիսուս Քրիստոսին՝ ստանալով մեղքերի քավություն և թողություն: Տերունահաստատ այս խորհուրդը կարևոր է յուրաքանչյուր քրիստոնյայի համար, որի ողջ գիտակցական կյանքը հարատև պատրաստություն է Ս. Հաղորդության համար՝ իբրև գրավական երկնքի արքայության ժառանգման: Ամեն անգամ ճաշակելով Տիրոջ Մարմինն ու Արյունը՝ ոչ միայն սրբվում ենք մեր բազում մեղքերից, այլ նաև գորանում և լցվում անսահման հույսով և հավատով: Ս. Հաղորդությանը պետք է մերձենալ հոգեպես և մարմնապես պատրաստ, հավատքով և երկյուղածությամբ: Միայն այս գիտակցությամբ և համոզմամբ այն կղառնա իսկապես օրհնություն մեր կյանքում:

Հոգևոր մխիթարություն է տեսնել, որ այժմ մեր եկեղեցիներում շատացել են Ս. Հաղորդություն ստացողները: Բայց շատերն էլ զանազան պատճառներով դեռ անտեղյակ են և չգիտեն այս խորհրդի մասին: Մեր Եկեղեցու անդամների մեջ բազում են նաև նրանք, ովքեր իրենց ողջ կյանքում Ս. Հաղորդություն են ստացել միայն մեկ անգամ՝ Ս. Մկրտության ժամանակ, և դրանից հետո այլևս չեն հաղորդվել: Հաշվի առնելով վերոգրյալ հանգամանքները՝ մեր հոգու պարտքը համարեցինք նոր աշխատություն գրել Ս. Հաղորդության մասին՝ ներառելով հարցերի լայն շրջանակ, որի նպատակն է ոչ միայն լրացնել հոգևոր կյանքում առկա այս

բացը և օգտակար լինել Հայոց Եկեղեցու զավակներին, այլ նաև որոշակի գիտելիքներ հաղորդել նրանց:

Գիրքը շարադրել ենք հնարավորինս մատչելի լեզվով և հարց ու պատասխանի ոճով՝ ներառելով Ս. Հաղորդության խորհրդին առնչվող 100 հարց: Հարցերը կազմել ենք՝ հիմք ընդունելով տարբեր հոգևորականների և մեր անձնական փորձառությունը: Դրանց մի մասը ծնվել են հավատացյալների և տարբեր մարդկանց հետ զրույցների ընթացքում՝ փորձելով հասկանալ, թե մասնավորապես ինչ խնդիրներ են իրենց մտահոգում և ո՞ր հարցերի վրա պետք է առավել կենտրոնանալ և մանրամասնել: Ուստի գրքում ներառել ենք պարզ հարցերից մինչև աստվածաբանական որոշ նրբությունների բացատրություններ՝ ցանկանալով դրանք հասանելի դարձնել ընթերցողին: Մեզ համար չեն եղել երկրորդական հարցեր, կարևորել ենք դրանցից յուրաքանչյուրը՝ մտածելով, որ նման հարց կարող է առաջանալ որևէ մեկի մոտ: Աշխատությունը գրելիս օգտվել ենք Ս. Գրքից, տպագիր և ձեռագիր հայրախոսական աղբյուրներից ու կանոնական գրվածքներից: Հարցերի պատասխանները հեշտությամբ փնտրելու նպատակով վերջում տեղադրել ենք գրքի ամբողջական հարցաշարը:

Մեր սրտագին ցանկությունն է, որ այս գիրքը ծառայի իր բուն նպատակին և առաքելությանը՝ օգնելով մարդկանց ամբողջականորեն և տարբեր դիտանկյուններից հասկանալու Ս. Հաղորդության խորհուրդը, որ-

պեսզի ամեն քրիստոնյա գիտակցաբար և պատրաստ-ված ճաշակի Տիրոջ Մարմինն ու Արյունը:

Խնդրանքս է, որ Ձեր նկատառումների, առա-ջարկների և նոր հարցերի մասին գրեք ինձ անձնա-կան էլ. փոստիս հասցեներով՝ tigransrk@yahoo.com, hayrzakaria@gmail.com, որոնք անպայման հաշվի կառնենք գրքի հետագա հրատարակություններում:

Գրքի տպագրության առիթով շնորհակալություն ենք հայտնում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան թեմին և նրա բա-րեջան առաջնորդ Գերաշնորհ. Ս. Հովնան արքեպիսկո-պոս Տերտերյանին:

Շնորհակալություն եմ հայտնում նաև ուսուցչիս, բազմավաստակ և փորձառու հոգևորական Արժանա-պատիվ Ս. Կարապետ ավագ քահանա Գլըրճյանին, ով իր դիտողություններով և օգտակար խորհուրդներով նպաստեց այս գրքի տպագրությանը, ինչպես նաև Ար-ժանապատիվ Ս. Մարկոս քահանա Մանգասարյանին և Նանա Գրիգորյանին:

Զաքարիա վրդ. Բաղումյան
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

1. Ի՞նչ է Ս. Հաղորդությունը:

Ս. Հաղորդությունը Քրիստոսի Եկեղեցու սրբազան խորհուրդներից է, որը հաճախ անվանում են նաև «խորհուրդների խորհուրդ», երբ Ս. Պատարագի ընթացքում Ս. Սեղանի վրա սրբազործված հացի և գինու տեսքով ճաշակում ենք Հիսուս Քրիստոսի կենդա-նարար և ճշմարիտ Մարմինը և Արյունը՝ սատանալով մեղքերի քավություն և թողություն: Այն Եկեղեցու խորհրդական կյանքի սիրտն է, առանց որի չի կարող լինել քրիստոնյայի իրական հոգևոր կյանք: Ս. Հաղոր-դության խորհուրդն ավելի հին է, քան Նոր Կտակարա-նի գրքերը, Եկեղեցու դավանաբանական և կանոնա-կան սահմանումներն ու որոշումները: Այն երկնային մանանան է, հարության հույսը, անմահության բալա-սանը, մեր ցավերի ամոքիչն ու դարմանը, երկնքի ար-քայության հավիտենական սեղանի նախաճաշակումը և ամենակարևորը՝ երկրի վրա մարդ-Աստված ամենա-սերտ հարաբերությունը, որը մշտապես մեզ հիշեցնում է ազամորդու հանդեպ Աստծո անսահման և անդավա-

ճան սիրո մասին: Մեր հավատքի Զորագլխին՝ Հիսուս Քրիստոսին ճաշակելով՝ քրիստոնյան զորանում է, գոտեպնդվում, նոր հույսով և հավատքով լցվում, որով Աստված գալիս և բնակվում է մեր մեջ:

2. Ի՞նչ ենք հասկանում «հաղորդվել» ասելով:

«Հաղորդվել» նշանակում է մի բանի մասնակից, կցորդ լինել, իսկ հոգևոր առումով խորհրդաբար մեր միացումն է Հիսուս Քրիստոսի հետ, երբ Ս. Պատարագի ժամանակ ճաշակում ենք Տիրոջ քավչարար Մարմինն ու Արյունը: Ս. Հաղորդությունը մաքրվելով մեր մեղքերից՝ նորոգվում և նոր արարած ենք դառնում, որովհետև Քրիստոս Իր մեկ անգամ պատարագմամբ փրկություն շնորհեց մեզ: Պողոս առաքյալն ասում է. «Նմանվեցե՛ք Աստծուն, որպես սիրելի զավակներ, և ընթացե՛ք սիրով, ինչպես Քրիստոս սիրեց մեզ և Իր անձը մատնեց մեզ համար՝ որպես անուշահոտ պատարագ և զոհ Աստծուն» (Եփես. 5. 1-2):

3. Ի՞նչ է խորհրդանշում Ս. Հաղորդությունը:

Եկեղեցու վարդապետները Ս. Հաղորդությունը համեմատում են «սիրո» խորհրդի հետ, քանզի քրիստոնյաները սիրով միանում են ոչ միայն Աստծո հետ, այլ նաև՝ իրար, երբ տեսանելի և անտեսանելի,

զինվորյալ և հաղթական Եկեղեցիները մեկ են դառնում Ս. Պատարագի ժամանակ: Սրբազան այս արարողությունից ժամանակ հրեշտակներն իջնում են երկնքից, և Եկեղեցին երկրի վրա երկինք է դառնում: Ընդհանրական Եկեղեցու 12 վարդապետներից՝ Ս. Կյուրեղ Երուսաղեմցին (313-386) իր ճառերից մեկում նշում է, որ Տիրոջ Մարմնի և Արյան ճաշակմամբ դառնում ենք Քրիստոսակիր, Քրիստոսին մարմնակից և արյունակից: Ս. Մկրտությունը դառնալով քրիստոնյա և Եկեղեցու անդամ՝ մեզ հնարավորություն է տրվում ճաշակելու կենաց ծառի պտղից՝ Ս. Հաղորդությունից և իրականություն է դառնում Եկեղեցին՝ իբրև Քրիստոսին հավատացողների միություն: Միջնագարի նշանավոր վարդապետ, մեկնիչ, գրիչ և հոռետոր Գևորգ վրդ. Սկևռացին († 1301) Ս. Հաղորդությանը նվիրված իր երկում Քրիստոսի Մարմնի և Արյան ճաշակումը գեղեցիկ ձևով համեմատում է մայրական կաթով սնվող մանկան հետ. «Մանուկն ուտում է մոր կաթը, մոր մարմնով և արյամբ կայանում, կերակրվում, սնվում և աճում: Այդ պատճառով շատ է սիրում ծնողին, որովհետև կաթը հենց սպիտակ դարձած արյունն է: Այսպես էլ Քրիստոս, Իր Մարմնով և Արյամբ մեզ կերակրելով, կամենում է, որ աստվածաման դառնանք, Նրանով սնվելով և աճելով՝ աստվածամանք, սիրենք Նրան ծնողի նման և նմանվենք Նրան»:

4. Ի՞նչ է ասում Ս. Պողոս առաքյալն այս միտության մասին:

Երբ Ս. Պատարագի ժամանակ գործածվող մեկ ամբողջական նշխարը բաժանվում է հավատացյալներին, դրանով նրանք միանում են իրար: Նույնն է նաև գինու դեպքում: Երբ ընծաները դադարում են լինել պարզ հաց և գինի, այլ՝ Քրիստոսի ճշմարիտ Մարմինն ու Արյունը, հենց այդ ժամանակ էլ զգում ենք Ս. Հաղորդության խորհրդի իրական գործվելունը, բաժնեկից դառնում Տիրոջը և իրար՝ վերածվելով Քրիստոսի խորհրդական մարմնի՝ եկեղեցու, որի գլուխը հաղթանակած հարուցյալ Տերն է: Քրիստոնեության ողջ իմաստն ու խորհուրդն այս եկեղեցացման և միության մեջ են, ուստի Տիրոջ անխոնջ առաքյալն ասում է. «Օրհնության բաժակը, որն օրհնում ենք, արդարև հաղորդություն չէ՞ Քրիստոսի Արյան. հացը, որը կտրում ենք, արդարև հաղորդություն չէ՞ Քրիստոսի Մարմնի. որովհետև մի հաց, մի մարմին ենք բոլորս, քանի որ բոլորս էլ այդ միակ հացից ենք վայելում» (Ա. Կորնթ. 10. 16-17):

5. Ինչո՞ւ է Ս. Հաղորդության խորհուրդը կոչվում «Անարյուն Պատարագ»:

Եկեղեցու գլխավոր ծիսական արարողությունը Ս. Պատարագն է, որի առանցքը Ս. Հաղորդությունն է: «Պատարագ» բառը նշանակում է գոհ, նվեր,

ընծա: Քրիստոս խաչի վրա թափած Իր թանկագին արյամբ մեր մեղքերի պարտամուրհակը գամեց խաչափայտին և Իրեն զոհաբերեց մարդկության փրկության համար: Ուստի Ս. Հաղորդությունը խաչի վրա մատուցած Տիրոջ հավիտենական Պատարագի շարունակական խորհուրդն է եկեղեցու կյանքում: Ամեն անգամ, երբ մեր եկեղեցիներում Ս. Պատարագ է մատուցվում, մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, իբրև հաշտության զոհ, պատարագվում է Ս. Սեղանի վրա, բայց այս անգամ անարյուն և խորհրդավոր կերպով պատարագիչ հոգևորականի ձեռքով, ինչպես «Պատարագամատուցի» ծածուկ աղոթքում է ասվում. «Որովհետև Դու ես, որ մատուցում ես, մատուցվում և ընդունում, Քրիստոսն, Աստված մեր»: Այդ պատճառով Ս. Հաղորդության խորհուրդն անվանում են նաև «Անարյուն Պատարագ»:

6. Ինչպե՞ս ենք այլ կերպ անվանում այս խորհուրդը:

Աստվածաշնչում, եկեղեցու հայրերի և վարդապետների գրվածքներում Ս. Հաղորդությանը տրվում են նաև այլ անվանումներ՝ նկատի ունենալով խորհրդի այս կամ այն կողմը: Մեջբերենք դրանցից մի քանիսը՝

➤ **Վերջին կամ Խորհրդավոր Ընթրիք:** Այսպես է կոչվում, քանզի Հիսուս խաչելությունից առաջ

վերջին անգամ ընթրեց 12 առաքյալների հետ: Վերնատան ընթրիքն անվանվում է նաև խորհրդավոր, որովհետև այն տարբերվեց մյուսներից. այդ օրը Քրիստոս հաստատեց Ս. Հաղորդության խորհուրդը,

- **Հացի կտրում կամ բեկանում:** Գործք Առաքելոցում նկարագրվում է, թե ինչպե՞ս էին նորագարձ քրիստոնյաները հավաքվում տներում և միմյանց հետ Ս. Հաղորդություն կիսում: Ս. Գիրքն այստեղ Պատարագի խորհուրդը բացատրում է «հաց կտրել» արտահայտությամբ (տե՛ս Գործք 2, 42, 46, 20, 7),
- **Գոհարանություն:** Այսպես ենք անվանում Ս. Պատարագի կարևոր մասը, որը թարգմանությունն է հունարեն *εὐχαριστία* (eucharistia) բառի: Իբրև քրիստոնյաներ՝ գոհություն կամ շնորհակալություն ենք հայտնում Աստծուն՝ հանապազ մեզ խնամելու, սիրելու և փրկության արժանացնելու համար: Հայոց «Պատարագամատուցի» գոհության աղոթքի հեղինակը Ս. Աթանաս Ալեքսանդրացին է (295-373): Նշենք, որ գոհաբանական աղոթքների հնագույն բնագրերը պահպանվել են հետառաքելական շրջանի ամենակարևոր երկրում՝ Դիոխեսում (Վարդապետություն տասներկու առաքյալների):

7. Ի՞նչ այլ անուններ է հավելում Ս. Գրիգոր Տաթևացին (1346-1409):

Վերոգրյալին Հայոց եկեղեցու եռամեծ վարդապետը հավելում է մի քանի անվանումներ և՛ շեշտելով, որ այդպես են ասում եկեղեցու վարդապետները՝

- **Թողալ:** Ս. Հաղորդության այս անվանումն առավելաբար ընդգծում է խորհրդի վախճանաբանական ենթատեքստը, քանզի այն «պաշար» է ապագայի համար,
- **Շնորհ:** Սա ընդգծում է այն ճշմարտությունը, որ Աստված Ս. Հոգու միջոցով է կատարում հացի և գինու փոխարկությունը Տիրոջ իրական Մարմնի և Արյան,
- **Կատարողություն:** Տաթևացին այս եզրն օգտագործում է իբրև Ս. Հաղորդության հոմանիշ՝ բացատրելով, որ Տիրոջ Մարմնի և Արյան խորհուրդը մյուս բոլոր խորհուրդների կատարումն է, ամբողջացումը:

8. Ո՞վ է հաստատել Ս. Հաղորդության խորհուրդը:

Ս. Հաղորդության խորհուրդը հաստատել է Տեր Հիսուս Քրիստոս Ավագ Հինգշաբթի օրը՝ Վերջին ընթրիքի ժամանակ, երբ Իր 12 աշակերտների հետ սեղան նստեց «Բաղարջակերաց տոնի առաջին օրը» (Մարկ. 14. 12, Մատթ. 26. 17): Քրիստոսի եկեղեցու այս կարևոր իրադարձության մասին գրել են Համատես Ավետարանները՝ Ս. Մատթեոս, Ս. Մարկոս և Ս. Ղուկաս ավետարանիչները, ինչպես նաև Պողոս առաքյալը կորնթացիներին ուղղած իր առաջին նամակում. «Եվ մինչդեռ նրանք ուսում էին, Հիսուս հաց վերցրեց, օրհնեց, կտրեց և տվեց աշակերտներին ու սասաց. «Աճե՛ք, կերե՛ք, այս է Իմ Մարմինը»: Եվ բաժակ վերցնելով՝ գոհություն հայտնեց, տվեց նրանց ու սասաց. «Խմեցե՛ք դրանից բոլորդ, որովհետև այդ է Նոր Ախտի Իմ Արյունը, որ թափվում է շատերի համար՝ իրենց մեղքերի թողության համար: Բայց ասում եմ ձեզ, այսուհետև Ես այլևս որթատունկի բերքից չեմ խմի, մինչև այն օրը, երբ ձեզ հետ կխմեմ նորն Իմ Հոր արքայության մեջ» (Մատթ. 26. 26-29, Մարկ. 14. 22-25, Ղուկ. 22. 17-20, Ա. Կորնթ. 11. 22-25): Հիսուսի հաստատած այս խորհուրդը դարեր ի վեր եկեղեցին կատարում է շարունակաբար «Տիրոջ հիշատակի համար»: Այն ոչ թե պարզապես պատմական մի իրադարձության հիշատակությունն է կամ Աստծո անսուտ

խոսքի նկատմամբ հավատարմության դրսևորում, այլ Տիրոջ ներկայության մեջ հարատևելու և նրա խորհրդական մարմնի՝ եկեղեցու, մաս կազմելու համար: Գործք Առաքելոցը պատմում է, թե ինչպես էին Քրիստոսի խաչելությունից հետո նրա աշակերտները հավաքվում հացը բեկանելու և գինին խմելու համար՝ հիշելով մեծ Վարդապետի շարչարանքները, խաչելությունը և հրաշափառ հարությունը: Այդ ժամանակից սկսած՝ Ս. Հաղորդությունը դարձավ եկեղեցու կենտրոնական ծիսական արարողությունը՝ Տիրոջը միանալու և հավիտենական կյանքի խորհրդով ապրելու համար: Հայաստանյայց Առաքելական եկեղեցին էլ, իբրև Հնդհանրական եկեղեցու անբաժանելի մի մաս, դարեր շարունակ կատարում է տերունահաստատ այս խորհուրդը՝ Տիրոջ Մարմինն ու Արյունը բաշխելով իր հոտին, հավատարիմ մնալով Տիրոջ ազդու խոսքին, Առաքելական Ավանդությանը և ուղղափառ դավանությանը:

9. Ինչո՞ւ Հովհաննեսի Ավետարանը չի անդրադառնում Ս. Հաղորդության խորհրդի հաստատման պատմությանը:

Տ. Իշտ է, ժամանակագրական առումով վերջին Ավետարանի հեղինակ Հովհաննես ավետարանիչը չի անդրադառնում Հիսուսի կողմից Ս. Հաղորդության խորհրդի հաստատման պատմությանը,

ոչ էլ մեջքերում է տերունական խոսքերը, բայց նրա Ավետարանի մի շարք տեղիներ ակնարկում են Տիրոջ Մարմնի և Արյան խորհրդի մասին: Այս առումով կարևոր նշանակություն ունի նրա Ավետարանի Զ գլուխը, որտեղ Հովհաննեսը պատմում է հացի բազմացման հրաշքի, ինչպես նաև Կափառնաու մի ժողովարանում կենաց հացին նվիրված Հիսուսի քարոզի մասին, որը, փաստորեն, Ս. Հաղորդության խորհրդի աստվածաբանական հիմքերից է: Հովհաննեսն իր Ավետարանի ԺԳ գլխում նաև հավելում է Հիսուսի կողմից աշակերտների ոտքերը լվանալու խրատական և հուզիչ պատմությունը, որը նախորդել է Ս. Հաղորդության խորհրդի հաստատմանը: Այլ խոսքով՝ այս Ավետարանը լրացնում է նախորդներին և ավելի շատ կենտրոնանում Ս. Հաղորդության խորհրդի իմաստի և կարևորության վրա:

10. Ի՞նչ է ասում Քրիստոս Ս. Հաղորդության մասին:

Հովհաննեսի Ավետարանում նկարագրված հացի բազմացումը և հինգ հազար հոգու կերակրումը նախորինակն են Ս. Պատարագի ժամանակ կենդանի հացի անհատնում առատության, ինչպես Ավարայրի պարտի Ս. Եղիշե (Ե դ.) վարդապետն է դիպուկ բնորոշում. «Մի օր հացացավ Վերնատանը և հաճախապես հացանում է Եկեղեցիներում Ս. Սեղանի վրա»:

Այս դեպքից հետո Հիսուս սկսում է բացատրել հրեաներին, որ բացի նյութական հացից, կա նաև կենաց և ճշմարիտ հաց, որը հավիտենական կյանքի համար է: Եվ հենց այստեղ Տերն առանց այլևայլության, հստակ ընդգծում է Ս. Հաղորդության կարևորությունը մարդու կյանքում. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե չուտեք Մարդու Որդու Մարմինը և չըմպեք Նրա Արյունը, ձեր մեջ կյանք չեք ունենա: Ով ուտում է Իմ Մարմինը և ըմպում Իմ Արյունը, հավիտենական կյանք ունի, և Ես նրան վերջին օրը հարություն առնել պիտի տամ, քանի որ Իմ Մարմինը ճշմարիտ կերակուր է, և Իմ Արյունը՝ ճշմարիտ ըմպելիք: Ով ուտում է Իմ Մարմինը և ըմպում Իմ Արյունը, կբնակվի Իմ մեջ, և Ես՝ նրա: Ինչպես Հայրը, որ Ինձ ուղարկեց, ապրում է, Ես էլ ապրում եմ Հոր միջոցով. և ով ուտում է Ինձ, նա էլ կապրի՝ Իմ միջոցով» (Հովհ. 6. 54-58):

11. Ի՞նչ է պատմում Ս. Պողոս առաքյալը Ս. Հաղորդության խորհրդի հաստատման մասին:

Ժամանակագրական առումով Ս. Հաղորդության խորհրդի հաստատման մասին ամենահին տեղեկությունը պահպանվել է Ս. Պողոսի՝ շուրջ 55 թ. կորնթացիներին գրած առաջին նամակում, քանի որ գրության մեջ առաջին Ավետարանը՝ Մարկոսինը, գրվել է ավելի ուշ՝ 64-70 թթ.: Չնայած Ս. Պողոսն անձնա-

պես չի մասնակցել Վերջին ընթրիքին, բայց իր գրածին առավել արժանահավատություն և ստուգություն հաղորդելու համար շեշտում է, որ այդ ամենն ինքը Տիրոջից է ստացել: Սա նշանակում է, որ նա կամ Հիսուսից անձնական հայտնություն է ստացել, կամ էլ նրա հաղորդածը հաստատում և վկայում է Վաղ եկեղեցու կյանքում Ս. Հաղորդության խորհրդի անառարկելի հեղինակության մասին: Ահա թե նա ինչ է գրում. «Ես ընդունեցի Տիրոջից, ինչ ավանդեցի ձեզ. այն, որ Տեր Հիսուս, այն գիշերը, երբ մատնվեց, հաց վերցրեց, գոհություն մատուցեց, կտրեց ու ասաց. «Այս է Իմ Մարմինը, որ ձեզ համար է. արե՞ք այս Իմ հիշատակի համար»: Նույն ձևով էլ ընթրիքից հետո վերցրեց բաժակը և ասաց. «Այս բաժակը նոր ուխտ է Իմ Արյամբ. արե՞ք այս Իմ հիշատակի համար, քանի անգամ էլ խմեք»: Քանի անգամ այս հացն ուտեք և այս բաժակը խմեք, պատմե՛ցե՛ք Տիրոջ մահը, մինչև Նա գա» (Ա. Կորնթ. 11. 23-26):

12. Որո՞նք են Ս. Հաղորդության նախատիպերը Հին Ուխտում:

Եկեղեցու հոգեկիր հայրերը Հին Կտակարանի որոշ հատվածներ ընկալել և մեկնաբանել են իբրև Ս. Հաղորդության նախատիպեր: Դրանցից կարևորներն են՝

- Աբրահամի կողմից Իսահակի զոհաբերությունը (տե՛ս Ծննդ. 22. 2-18),

- Մելքիսեդեկն օրհնում է Աբրահամին՝ նրան հյուրասիրելով հաց և գինի (տե՛ս Ծննդ. 14. 18):
- Պասեքը կամ Զատիկը, որը խորհրդանշում էր եգիպտական գերությունից իսրայելացիների ազատագրվելը (տե՛ս Ելք 12-13 գլ.),
- Մանանան, որով Աստված կերակրում էր իսրայելացիներին անապատում (տե՛ս Ելք 16. 15, Սաղմ. 77. 25): Իսկ Հիսուս Ավետարանում մանանան նույնացնում է կենաց հացի հետ (տե՛ս Հովհ. 6. 31-35):

13. Ո՞վ կարող է Ս. Պատարագ մատուցել և Ս. Հաղորդություն տալ:

Միայն առաքելական հաջորդականությամբ վավերական ձեռնադրություն և օծում ունեցող հոգևորականը՝ քահանայից մինչև կաթողիկոս:

14. Ի՞նչ է անհրաժեշտ Ս. Հաղորդություն ստանալու համար:

- Տիրոջ Մարմինն ու Արյունը ճաշակելու համար պետք է՝
- լինել սկրտված, այսինքն՝ քրիստոնյա և եկեղեցու անդամ,
 - ունենալ ուղղափառ հավատք, այսինքն՝ հավատալ և այն համոզումն ունենալ, որ ճաշակում ենք ոչ թե

պարզ հաց և գինի, այլ Տիրոջ իրական Մարմինն ու Արյունը,

- Ս. Հաղորդությունից առաջ զղջալ գործած մեղքերի համար, ապաշխարել, խոստովանել և թողություն ստանալ, այսինքն՝ միայն ինքնաքննությունամբ, հոգևոր և ֆիզիկական մաքրությունամբ մոտենալ Ս. Հաղորդությանը,
- Հաղորդվելու օրը կամ նախորդ օրվա երեկոյից պահք պահել, Ս. Գիրք ընթերցել, աղոթել, լողանալ և ոչինչ չուտել:

15. Քանի որ մկրտված չեմ, բնականաբար, չեմ կարող հաղորդվել, բայց արդյո՞ք կարող եմ ներկա լինել Ս. Պատարագին:

Ս. Պատարագի ժամանակ՝ նախքան բուն խորհրդի կատարումը, սարկավազը բարձրաձայն ասում է. «Ո՛չ որ երախաներից (այսինքն՝ չմկրտվածներից), ո՛չ որ թերահավատներից և ո՛չ որ ապաշխարողներից թող ջնոտենա աստվածային այս խորհրդին»: Հնում նմանատիպ մարդիկ սարկավազի այս հորդորից հետո դուրս էին գալիս գավիթ կամ կանգնում եկեղեցու դռան մոտ և այնտեղից հետևում էին սրբազան արարողությունը: Եկեղեցու ներսում մնում էին միայն արժանավորները, ովքեր պիտի Ս. Հաղորդություն ստանային: Անկասկած, Ս. Պատարագն ամբողջանում է Ս. Հաղորդության բաշխմամբ և հավատացյալների ճաշակմամբ,

այդ պատճառով էլ Եկեղեցին հորդորում է պատրաստ լինել՝ գործուն մասնակիցը դառնալու Տիրոջ Մարմնի և Արյան խորհրդի: Այսօր էլ սարկավազի պատվերը լսում ենք ամեն Պատարագի ժամանակ, սակայն դուրս չենք գալիս եկեղեցուց: Մեր խորհուրդն է՝ անպայման, առանց տատանվելու մկրտվել և դառնալ քրիստոնյա, որպեսզի հնարավորություն ընձեռվի ճաշակելու Տիրոջը և զգալու ոչ միայն Նրա անսահման քաղցրությունն ու օրհնությունը, այլ նաև Ս. Հոգու շնորհների հեղումը մեզ վրա: Չմկրտված վիճակում Ս. Պատարագին ներկա լինելը գրկում է մեզ Տիրոջ հետ միավորումից և Նրա հետ հաղորդակցվելուց:

16. Ո՞րն է Ս. Հաղորդության խորհրդի ձևը:

Խորհրդի հաստատման ժամանակ Հիսուսի արտաբերած խոսքերն են. հացի համար՝ «Առե՛ք, կերե՛ք, այս է Իմ Մարմինը...», գինու դեպքում՝ «Խմեցե՛ք դրանից բոլորդ, որովհետև այդ է Նոր Ուխտի Իմ Արյունը ...»:

17. Ո՞րն է Ս. Հաղորդության նյութը:

Հացը եկեղեցին այս խորհրդի համար օգտագործում է հաց և գինի: Հացը պետք է պատրաստված լինի ցորենից և ոչ թե գարուց կամ կորեկից,

ինչպես նաև անխմոր, այսինքն՝ բաղարջ: Իսկ Ս. Պատարագի գինին պետք է լինի խաղողի անապակ գինի: Ինչպես Ս. Գրիգոր Տաթևացին է ասում. «Հաղորդությունը խորհուրդ է, որ իր մեջ պարունակում է Քրիստոսին հացի և գինու տեսքով, և երկուսում էլ Քրիստոս առկա է ամբողջապես»:

18. Ի՞նչ գույնի գինի են օգտագործում Ս. Պատարագի ժամանակ:

Այժմ մեր եկեղեցիներում օգտագործում ենք գործարանային կարմիր գինի՝ իբրև նյութ Քրիստոսի արյան: Հետաքրքրական է, որ Ս. Ներսես Շնորհալին († 1173) 1165 թ. Մանուել Ա. Կոմնենոս բյուզանդական կայսրին գրած նամակում նշում է, որ կարող ենք նաև տարբեր գույնի գինի օգտագործել. «Ինչպես Քրիստոսի Արյան նյութը՝ գինին, ինչ գույնի էլ լինի, ընդունելի է՝ թե՛ սև, թե՛ կարմիր և թե՛ սպիտակ»: Պետք է հաշվի առնել, որ Շնորհալի հայրապետն այս և մյուս ծիսական խնդիրներին մոտենում է լայնախոհությամբ և իմաստությամբ՝ ընդգծելով, որ խորհուրդների կատարման մեջ նյութի գույնից, անխառն կամ խառնյալ լինելուց ավելի կարևոր են ուղղափառ հավատքն ու մաքրակենցաղությունը, որոնք երկուսն էլ ընդունելի են Աստծուն:

19. Ինչպե՞ս են հացը և գինին դառնում Քրիստոսի Մարմինն ու Արյունը:

Ս. Պատարագի ժամանակ հոգևորականի աղոթքների և Ս. Հոգու ներգործությամբ սովորական հացը և գինին անճառելի, անհասանելի, անքննելի, անիմանալի կերպով դառնում են Քրիստոսի իրական Մարմինն ու Արյունը: Մարդկային միտքն ընդունակ չէ մինչև վերջ բացատրելու կամ հասկանալու այդ «ինչպես»-ը, բայց մենք առանց երկմտելու հավատում ենք, որ Ս. Սեղանի վրա Ս. Երրորդության երրորդ Անձի՝ Ս. Հոգու իշմամբ սրբագործված հացն ու գինին փոխակերպվում են Տիրոջ Մարմնի և Արյան: Մեր եկեղեցու հայրերն այս իրողությունը բացատրելու համար օգտագործում են «փոխարկվել», «փոխվել», «հոգիանալ» և «դառնալ» եզրերը:

20. Ինչպե՞ս է մեկնաբանում փոխարկման պահը Հռոմեական Կաթոլիկ եկեղեցին:

Հռոմեակաթոլիկ եկեղեցին հացի և գինու՝ Քրիստոսի Մարմնի և Արյուն դառնալը բացատրում է գոյացափոխություն (լատ. *transubstantiation*) եզրով, որը պաշտոնապես ներկայացվեց 1215 թ. Լաթերանի Գ ժողովում: Այս աստվածաբանական եզրի տեսական հիմնավորումը տվել է Կաթոլիկ եկեղեցու նշանավոր վարդապետ Թոմաս Աքվինացին (1225-1274): Ըստ

այս ուսմունքի՝ հացի և գինու գոյացությունը փոխվում է, մինչդեռ նրանց պատահական հատկությունները՝ համը, հոտը, գույնը, քանակը, տեսակը և այլն մնում են նույնը: Արևելյան Ուղղափառ եկեղեցիները, որոնց թվում նաև Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, զերծ են մնացել իմաստասիրական և աստվածաբանական նրբությունների մեջ խորանալուց՝ այն համարելով «խորհուրդ խորին» և մարդկային մտքին անհասանելի: Մեզ համար շատ հստակ է, որ Ս. Հոգու ներգործությամբ հացը և գինին փոխարկվում, դառնում են Քրիստոսի ճշմարիտ Մարմինն ու Արյունը:

21. Ուրեմն, Ս. Սեդանի վրա սրբագործված հացը և գինին սովորական հաց և գինի չեն:

Ո՛չ: Վերևում նշեցինք, որ, Ս. Պատարագի ընթացքում Ս. Հոգու ներգործությամբ և պատարագչի աղոթքներով դրանք դառնում են Տիրոջ ճշմարիտ և իրական Մարմինն ու Արյունը: Առաքելահիմն մեր եկեղեցու աստվածաբանական մտածողության համաձայն՝ սրբագործված հացի և գինու մեջ Քրիստոս ներկա է ոչ թե խորհրդանշական կամ պատկերավոր ձևով, այլ՝ ճշմարտապես և իրական: Ինչպես Ընդհանրական, այնպես էլ մեր եկեղեցու հայրերն ու վարդապետներն իրենց գրվածքներում շեշտել են այս կարևոր հանգամանքը՝ մենք ճաշակում ենք ոչ թե պարզ

հաց և գինի, այլ հենց Քրիստոսին: Միայն այս գիտակցությամբ և աներկբա համոզմամբ պետք է մոտենալ Ս. Հաղորդությանը: Եթե մեկը թերահավատ է կամ կասկածամիտ, ապա նրա համար ավելի լավ է Ս. Հաղորդությանն ընդհանրապես չմոտենալ:

22. Ուզում եք ասել, որ ուղղափառ հավատքի խոստովանությունն անհրաժեշտ պայման է Ս. Հաղորդություն ստանալու համար:

Այո: Այս է պատճառը, որ Ս. Հաղորդությունը բարձրաձայն ասում է հավատքի համառոտ մի խոստովանություն. «Ասացե՛ք մեղանչեցի Աստծո դեմ: Հավատում եմք Ս. Հորը՝ իբրև ճշմարիտ Աստված, հավատում եմք Ս. Որդուն՝ իբրև ճշմարիտ Աստված, հավատում եմք նաև Ս. Հոգուն՝ իբրև ճշմարիտ Աստված: Որովհետև սա է մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի կենդանի և կենդարարար Մարմինը և Արյունը, որ մեր մեղքերի քաղության և թողության համար է: Խոստովանում և հավատում եմք»:

23. Ի՞նչ է ասում Ս. Հովհան Մանդակունին (478-490) սրբագործված հացի և գինու՝ Տիրոջ իրական Մարմինը և Արյունը լինելու մասին:

Երանելի Հայրապետն իր ճառերից մեկում խնդրի վերաբերյալ հստակ նշում է. «Եվ մենք ճշմարիտ հավատքով հավատում ենք, որ Քրիստոն է Սեղանի վրա. Նրան ենք մոտենում, Նրան ենք տեսնում, Նրան ենք շոշափում, Նրան ենք համբուրում, Նրան ենք մեր ներսն ընդունում և դառնում մարմին, անդամ և որդիներ Աստծո: Արդ, նա, ով այսպիսի հավատքով չի հավատում և չի ընդունում, որ Աստծո Որդու մարմինն է այն, հեռու է Աստծո օգնությունից, հեռու է Ս. Հոգու շնորհներից, հեռու է մեղքերի թողությունից և հավիտենական կյանքից, չի ակնկալում հարություն և փրկության հույս չունի, զուրկ է քրիստոնեական հավատքից, որով՝ Քրիստոսի արյան հեղումով, մեզ փրկություն եղավ: Եվ արդ, ոչ ոք թող խղճմտանքով չմոտենա Նրան, ոչ ոք թող թերահավատությամբ չմոտենա Նրան, ոչ ոք թող անտարբերությամբ չմոտենա Նրան, այլ ճշմարտապես թող հավատա, որ մեծ ու ահեղ խորհրդի ժամանակ Եկեղեցին երկինք է դառնում, Խորհրդի սեղանը՝ փառքի աթոռ, որի վրա իջնում և բազմում է Քրիստոս, ով միշտ բաշխվում է բոլորի փրկության համար»:

24. Ի՞նչ այլ վկայություններ ունենք այս մասին Եկեղեցու հայրերից և հայ մատենագրության մեջ:

Ինչպես վերևում նշեցինք, Ընդհանրական և Հայոց Եկեղեցիների վարդապետներն ու հայրա-

պետներն իրենց բազմաբնույթ գրվածքներում միշտ շեշտել են այն կարևոր հանգամանքը, որ Ս. Հաղորդույթյամբ ճաշակում ենք հենց Քրիստոսին: Այստեղ պարզապես մեջբերում ենք այս ճշմարտութունը հաստատող մի քանի օրինակներ:



Կապաղովկյան հայրերից Ս. Բարսեղ Կեսարացին (330-379) իր ճառերից մեկում ասում է. «Շատ զգուշությամբ և երկյուղով ձեր սրտերում պահեք՝ մի՛ նայեք իբրև երևացող հացի և գինու, այլ [տեսեք] այն մեծ խորհուրդը, որ ծածկված է մարմնավոր աչքի տեսությունից, որը միայն հոգու աչքով է երևում նրանց, ովքեր սրբությամբ են այն փնտրում, որի ճաշակմամբ աստվածային ցնծությամբ են ուրախանում, քանզի Աստված կարող է այն հում մսի և արյան վերածել, ինչպես սրբերից մեկի հետ եղավ: Բայց քանի որ մարմնավորներս չենք կարող հում միսն ու արյունը տանել, ուստի Աստված հացով և գինով ներկայացրեց, բայց իբրև հացի մի՛ նայեք և ոչ որպես գինու, քանզի սա է Աստծո Որդու ճշմարիտ Մարմինն ու Արյունը»:



Այուրեղ Երուսաղեմցին իր ծիսական ճառերից մեկում Ս. Պատարագի փոխարկեպոստը բացատրում է Կանայի հարսանիքի հրաշքի օրինակով: Ինչպես Տերն իր մեկ շարժումով ջուրը գինու վերածեց, նույն

ձևով էլ այստեղ գինին դառնում է Նրա Արյունը. «Հացը և գինին մի՛ համարիր պարզ հաց և գինի, քանի որ Տիրոջ որոշմամբ այն Քրիստոսի Մարմինն է և Նրա Արյունը: Քանզի եթե զգայարանդ էլ այդպես է ենթադրում, ապա հավատքդ թող հաստատի քեզ, որ այն Քրիստոսի Մարմինն է և Արյունը: Կատարվածի մասին մի՛ դատիր համից, այլ հավատքով իմացիր առանց երկմտանքի, թե դու արժանացել ես հաղորդակից լինելու Քրիստոսի Մարմնին և Արյանը»:



Ոսկեդարի պատմիչ Փավստոս Բուզանդն իր «Հայոց պատմության» Ե դպրության ԻԸ գլխում հետաքրքիր մի պատմություն է մեջբերում: Ծոփաց աշխարհում ճգնակյաց խստակրոն եղբայրներից մեկը հրաժարվում էր Ս. Հաղորդություն ընդունելուց, քանզի չէր հավատում, որ գինին Ս. Պատարագի ժամանակ դառնում է Քրիստոսի իրական Արյունը և միշտ վիճում էր միաբանակից իր եղբայրների հետ: Մեկ օր՝ Ս. Պատարագ մատուցելիս, այս թերահավատ ճգնավորը բաց աչքերով տեսիլք է տեսնում. Քրիստոս Աստված իջնում է Ս. Սեղանի վրա դրված սկիհի մեջ, բացում է իր գեղարդակոխ կողը, որից արյունը թափվում է սկիհի մեջ: Այս պատմությունից հետո Բուզանդը ևս մեկ անգամ շեշտում է Հաղորդության խորհրդի ժամանակ գործածվող գինուն՝ Քրիստոսի ճշմարիտ Արյուն լինելու հանգամանքը:



Նույն Ոսկեդարի մեկ այլ նշանավոր ներկայացուցիչ և Ավարայրի ճակատամարտի մասնակից Ս. Եղիշե վարդապետն իր ճառերից մեկում ասում է. «Քանզի Քրիստոսի մահը պատմելով՝ տերունական Սեղանի վրա հացն ու գինին չեն մնում այնպիսին, ինչպիսին առաջ էին, այլ ճշմարտապես դառնում են Մարմինն ու Արյունը ոչ թե ապականացու մեկի, այլ՝ Անպականի, և ով արժանապես է մոտենում, մեր ապականությունն անապականության է վերածում»:



Գրիգոր վրդ. Սկևռացին խնդրի վերաբերյալ ասում է. «Ճշմարտապես հավատում ենք և քարոզում, որ աստվածային Սեղանին քահանայի ձեռքով մատուցված սուրբ հացն ու բաժակը Քրիստոսի ճշմարիտ Մարմինն ու Արյունն են դառնում: Եվ սա հայտնի է, քանզի նույն Ինքը Տերն էլ ասաց, որ հացն Իր Մարմինն է, և գինին՝ Իր Արյունը: Եւ քանի որ Քրիստոսի Մարմինն ու Արյունն են, Աստված է Ինքը ճշմարտապես. ինչպես Ս. Հոգին իջավ Ս. Կույս Մարիամի մեջ և մաքրեց նրան, ապա Բանն Աստված իջավ Կույսի մեջ, վերցրեց նրանից մարմինը և Իրեն միավորեց, աստվածացրեց, այսպես Ս. Հոգին, իջնելով այս հացի և գինու վրա, մաքրում է...: Թո՛ղ ոչ ոք աստվածացած այս սուրբ հացը հաց և գինին գինի չտեսնի, թերահավատությամբ

լով հաց և գինի չհամարի, որովհետև աներևութաբար իջնում է սրա վրա Հոգին»:

25. Ո՞ր պահին են հացը և գինին դառնում Քրիստոսի իրական Մարմինն ու Արյունը:

Ըստ Հայոց եկեղեցու վարդապետության՝ Ս. Պատարագի ժամանակ, երբ դպրաց դասը երգում է շարականի հետևյալ բառերը. «Քո առջև, Տեր: Աստծո Որդի, որ պատարագվում ես Հորը հաշտության համար, որպես կենաց հաց բաշխվում մեր մեջ, Քո սուրբ արյան հեղմամբ աղաչում ենք Քեզ, ողորմիր Քո արյամբ փրկված հոտին», պատարագիչ հոգևորականը ծածուկ աղոթքում բարերար Աստծուն խնդրում է, որ նա ուղարկի էակից Ս. Հոգին, որպեսզի նրա ներգործությամբ Ս. Սեղանի վրայի հացը և գինին փոխարկվեն Քրիստոսի Մարմնի և Արյան: Այդ ժամանակ քահանան վերցնում է հացը, երեք անգամ խաչանիշ օրհնում՝ ասելով. «Որով օրհնելով այս հացը՝ ճշմարտապես դարձրու մեր Տեր և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Մարմինը»: Ապա նա վերցնում է գինով լի բաժակը, կրկին երեք անգամ խաչանիշ օրհնում՝ ասելով. «Եվ օրհնելով այս բաժակը՝ ստուգապես դարձրու մեր Տեր և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Արյունը»: Այս ամենից հետո մաղզմաչով հացը դնում է բաժակի վրա, երեք անգամ խաչանիշ օրհնում՝ ասելով. «Որով օրհնելով այս հացը

և գինին՝ ճշմարտապես դարձրու մեր Տեր և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Մարմինը և Արյունը՝ փոխարկելով Քո Ս. Հոգով»: Այս պահից սկսած՝ արդեն գործ ունենք ոչ թե սովորական հացի և գինու հետ, այլ՝ Տիրոջ իրական Մարմնի և Արյան: Այսուհետ այս գիտակցությամբ պիտի հետևի հավատացյալը Ս. Պատարագին՝ Տիրոջից խնդրելով արժանի դարձնել իրեն՝ ճաշակելու նրա Մարմինն ու Արյունը:

26. Ինչպե՞ս է մեկնաբանում այս հատվածը Խոսրով եպս. Անձևացին (Ժ դ.):

Հայ եկեղեցական մատենագրության մեջ պահպանված Ս. Պատարագի առաջին մեկնություններից մեկն է Խոսրով եպս. Անձևացին՝ Ս. Գրիգոր Նարեկացու (Ժ-ԺԱ դդ.) հայրը, այսպես է մեկնաբանում ընծաների նվիրագործման վերոգրյալ հատվածը. «Փրկիչը մարմնացավ կույս Մարիամից՝ Ս. Հոգու միջոցով, ով ուղարկվելով Հորից՝ Մարիամի արգանդից մարմին վերցրեց և խառնեց, միացրեց Բանն Աստծուն, ով նրանից ծնվելով՝ իբրև մի Որդի և Աստված հայտնվեց: Ս. Հոգին նույնն է գործում նաև Եկեղեցում և Ս. Սեղանի վրա. վերցնելով հացը, ինչպես և սկիիի գինին՝ միացնում է Աստծո Որդուն, և սա ճշմարտապես դառնում է Քրիստոսի Մարմինն ու Արյունը...: Իսկ երբ ասում ենք, թե Ս. Հոգին հավիտենակից է և էակից, դրանով խոստովանում ենք միշտ Հոր մոտ և Հոր հետ

լինելը: Ինչպես Հայրը կար, կա և միշտ մնալու է, և չկա մի ժամանակ, երբ չկար, այդպես էլ Ս. Հոգին միշտ Հոր և Որդու հետ էր և է՝ մշտնջենավորապես ու էակից, ով նաև այսպիսի մեծամեծ հրաշքներ է գործում՝ սովորական հացն ու գինին Աստծո Որդու անապական Մարմնի և Արյան փոխարկելով»:

27. Ո՞րն է այս հարցում Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու տեսակետը:

Իտարբերություն Հայոց Եկեղեցու դիրքորոշման՝ Լատին Եկեղեցին ուսուցանում է, որ Ս. Պատարագի ժամանակ հացը և գինին Տիրոջ Մարմինն ու Արյունն են դառնում այն պահին, երբ հոգևորականն արտասանում է Ս. Հաղորդության խորհրդի հաստատման ժամանակ Հիսուսի արտաբերած խոսքերը. «Առե՛ք, կերե՛ք», «Արբե՛ք սրանից»: Մեր Եկեղեցու վարդապետները պնդում են, որ այս պահին պատարագիչ հոգևորականը պարզապես կրկնում է Տիրոջ խոսքերը, բայց ընծաների փոխակերպությունը կատարվում է, երբ հայցում ենք Ս. Հոգու ներգործությունը դրանց վրա:

28. Ինչո՞ւ Հիսուս Քրիստոս Ս. Հաղորդության համար հաց և գինի ընտրեց:

Ս. Իսնդրին, մի քանի պատճառներ է մատնանշում:

Նախ՝ մարմնի կենդանության համար կերակուր և ըմպելիք է հարկավոր, նույն ձևով հացն ու գինին խորհրդանշում են այդ կենդանությունը:

Երկրորդ՝ Ս. Հաղորդությունը Քրիստոսի շարժարանքների և մահվան հիշատակն է: Երբ Հիսուսի կողմ խոցեցին, արյունը մարմնից բաժանվեց, ուստի մարմնի տեղը պետք է հացը դնել, իսկ արյանը՝ գինին: Նմանապես մարդը բաղկացած է մարմնից և հոգուց, հացը մարմնի փրկությունն է, իսկ գինին՝ հոգունը: Ինչպես այս կյանքում առանց ուտելու և խմելու չենք կարող ապրել, այնպես էլ հավիտենական կյանքում առանց հոգևոր կերակրի՝ Ս. Հաղորդության:

Երրորդ՝ հաց և գինի կարելի է հեշտությամբ գտնել ամենուր, որոնցով անխափան մեր փրկության հիշատակը կկատարվի:

Չորրորդ՝ նյութական առումով հարմար է շոշափել հացը և գինին, քան Հին Ուխտի միսը և արյունը,

Հինգերորդ՝ ըստ մարգարեի՝ հացն առավել հաստատում է մարդու սիրտը, իսկ գինին ուրախություն է պատճառում մարդուն (հմմտ. Սաղմ. 103. 15): Նմանապես Քրիստոսի փրկական Մարմինն առավել է հաստատում հավատացյալի սիրտն ու հոգին, իսկ գինին փարատում է մեղքերի պատճառով եղած տրտմությունը, ինչպես առաքյալն է ասում. «Եվ Հիսուսի Արյունը մաքրում է մեզ բոլոր մեղքերից» (Ա Հովհ. 1. 7):

Վեցերորդ՝ հացը ցորենի բազում հատիկներից է պատրաստված, իսկ գինին՝ խաղողի բազում պտուղ-

ներից: Նույն ձևով Քրիստոսի խորհրդական Մարմինը՝ Եկեղեցին, հավատացյալների համախմբումն է, հավաքատեղին:

Յոթերորդ՝ ցորենը ազորիքով մանրացվում է և կրակի վրա հաց դառնում, իսկ գինին հնձանում է ճմլվում և պատրաստվում խմելու համար: Սրանք այլաբանորեն խորհրդանշում են Քրիստոսի շարժարանքները:

Ութերորդ՝ այս նոր խորհրդի նյութը պիտի տարբերվեր հնից, ուստի Հիսուս հացով և գինով ավանդեց այն, ինչպես Մելքիսեդեկը, ով նախորդում էր հին օրենքին, հաց և գինի մատուցեց՝ իբրև Քրիստոսի պատարագի ճշմարիտ նախօրինակ, ինչպես Դավիթ մարգարեն է ասում. «Դու հավիտենական քահանա ես՝ ըստ Մելքիսեդեկի կարգի» (Մաղմ. 109. 4):

29. Ո՞րն է Ս. Հաղորդության արդյունքը մարդու կյանքում:

Փրկչի Մարմինը և Արյունը ճաշակելով՝ քավություն և թողություն է տրվում մեր մեղքերին, դառնում ենք Քրիստոսով նոր մարդ՝ լուսավորված և զորացած: Մեր այդ երանելի վիճակը մղում է մեզ հաճախակի մերձենալ Տիրոջը, ճաշակել Նրան՝ համոզվելով ևս մեկ անգամ, թե որքան քաղցր է Տերը: Ս. Գրիգոր Տաթևացին ասում է. «Այս խորհրդի գործն է ավելացնել շնորհը և դեղ լինել ամենօրյա մեղքերին»:

Հավատքով, երկյուղածությամբ և սիրով մոտենալով Նրան՝ կարող ենք զգալ նաև Ս. Հաղորդության հրաշագործող, այլակերպող զորությունը մեզ վրա, ինչպես Ս. Հովհան Մանդակունին է ասում. «Ուլքեր հավատքով և երկյուղածությամբ են մոտենում Քրիստոսին, լուսավորվում են Ս. Հոգով և առաքինի գործերով օրեցօր վեր բարձրանում»:

30. Ի՞նչ հաճախականությամբ պետք է հաղորդվել:

Այս հարցը շատ կարևոր է յուրաքանչյուր քրիստոնյայի հոգևոր կյանքի զորացման համար, քանզի առանց Ս. Հաղորդության՝ Տիրոջը մերձեցման, իմաստազուրկ է մեր կյանքը: Եթե մարդ հոգեպես և ֆիզիկապես պատրաստ է հաղորդվելու, ապա առանց վարանելու պետք է Ս. Հաղորդություն ստանա: Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, Ս. Հաղորդության խորհուրդը հաստատելիս շահմանեց, թե քանի՜ անգամ պետք է հաղորդվել: Բայց Եկեղեցին հորդորում է հաճախակի հաղորդվել, եթե դրա համար որևէ խոչընդոտ կամ արգելք չկա: Չպետք է մոռանալ, որ Ս. Պատարագին մեր մասնակցությունը կատարյալ և ամբողջական է դառնում միայն այն ժամանակ, երբ մենք Ս. Հաղորդություն ենք ստանում:

31. Ինչպիսի՞ն էր այս հարցում Վաղ Եկեղեցու կեցվածքը:

Երբ հետադարձ հայացք ենք նետում Վաղ Եկեղեցու գործնական ծիսական կյանքին, տեսնում ենք, որ այն ժամանակ Ս. Պատարագին մասնակից բոլոր ներկաները հաղորդվում էին: Նրանք եկեղեցի էին գալիս հենց Տիրոջ Մարմինն ու Արյունը ճաշակելու համար: Ս. Բարսեղ Կեսարացին 372 թ. գրված իր նամակներից մեկում խնդրի վերաբերյալ ասում է. «Լավ է և օգտակար ամեն օր հաղորդվել և ընդունել Ս. Հաղորդություն: Քրիստոս հստակ ասում է. «Ով ուտի Իմ Մարմինը և խմի Իմ Արյունը, հավիտենական կյանք ունի...» (Հովհ. 6. 54): Ես ինքս շաբաթը չորս անգամ եմ հաղորդվում՝ կիրակի, չորեքշաբթի, ուրբաթ և շաբաթ, ինչպես նաև ուրիշ օրերի, երբ ինչ-որ սրբի հիշատակություն է լինում»: Այս վկայությունը ցույց է տալիս, թե ինչ հաճախականությամբ էին այդ ժամանակ քրիստոնյաները մոտենում Ս. Հաղորդությանը: Բացի այդ, հատկապես վանական համալիրներում ամեն օր Ս. Պատարագ էր մատուցվում, և մարդիկ, բնականաբար, կարող էին հաղորդվել: Առաքելական շրջանից եկած այս սովորությունն այժմ էլ պահպանվում է Ս. Երկրի տերունական սրբավայրերում, քանզի Երուսաղեմի Հայոց Պատրիարքության զինվորյալ միաբանության անդամներն ապրում են այդ նույն հոգևոր ռիթմով: Նրանք ամենօրյա Ս. Պատարագներ

են մատուցում հայերիս պատկանող սրբավայրերում, որոնց ժամանակ մասնակիցները կարող են Ս. Հաղորդություն ստանալ:

32. Ի՞նչ հաճախականությամբ պետք է այսօր հաղորդվել:

Այժմյան իրականությունը և ծիսական կյանքը տարբերվում են անցյալից, քանզի մեզ մոտ սովորաբար Ս. Պատարագ է մատուցվում կիրակի, տոն և մասնավոր օրերին, ինչպես նաև այս կամ այն սրբի տոնին, որը հանդիպում է շաբաթվա ընթացքում: Հետևաբար, թե քանի՞ անգամ կարելի է տարվա մեջ Ս. Հաղորդություն ստանալ հարցը կախված է ոչ միայն Ս. Պատարագների մատուցումից, այլ նաև մեր ներքին հոգևոր պատրաստությունից: Անշուշտ, կատարյալ և իդեալական կլինեն հաղորդվել յուրաքանչյուր Պատարագի ժամանակ, բայց գործնական հոգևոր կյանքն այլ բան է ցույց տալիս: Մենք զանազան պատճառներով միշտ չէ, որ պատրաստ ենք Ս. Հաղորդությանը մոտենալու: Բացի այդ, մեզանից յուրաքանչյուրն ունի իր հոգևոր ուրույն աշխարհը, որը տարբերվում է մյուսինից: Եթե տվյալ մարդն իրեն պատրաստ է զգում և ցանկություն ունի հաղորդվել ամեն կիրակի, ապա անկասկած կարող է մոտենալ Ս. Հաղորդությանը: Մեկ այլ ծայրահեղություն է, երբ մենք հաղորդվում ենք տոնից տոն կամ առիթից առիթ: Ս. Հաղոր-

դուժյան յուրաքանչյուր ճաշակունից հետո մարդ պետք է պատրաստվի հաջորդին, այսինքն՝ քրիստոնյայի կյանքը պետք է լինի Տիրոջ Մարմինն ու Արյունը ճաշակելու հանապազ պատրաստության հարատև մի ընթացք:

33. Այդ դեպքում ինչո՞ւ են հոգևորականները հաճախ նշում, որ տարվա ընթացքում պետք է հաղորդվել հինգ տաղավար տոններին:

Եկեղեցականները հորդորում են, որ քրիստոնյան տարվա ընթացքում պարտադիր Ս. Հաղորդություն ստանա գոնե հինգ տաղավար տոններին՝ Ս. Ծննդյանը, Ս. Հարությանը (Զատիկին), Պայծառակերպությանը (Վարդավառին), Ս. Աստվածածնի վերափոխմանը (Խաղողօրհներին) և Խաչվերացին: Սա այն նվազագույնն է, որ պահանջվում է յուրաքանչյուր քրիստոնյայից: Բայց պետք չէ բավարարվել այսքանով: Ինչպես մեր մարմնի ֆիզիկական գոյության համար նյութական հաց ենք ուտում և մեր քաղցը մեղմում, այնպես էլ հոգևոր հացի՝ Ս. Հաղորդության, կարիքն ունենք՝ մեր հոգևոր քաղցն ու սովը բավարարելու համար: Ուստի եզրակացությունը մեկն է՝ ցանկության և պատրաստ լինելու դեպքում, անպայման եկեղեցի գնալ, մասնակցել Ս. Պատարագին և Ս. Հաղորդություն ստանալ:

34. Ի՞նչ է սառում Ս. Հովհան Մանդակունին հաղորդվելու քանակի մասին:

Ս. Հաղորդության խորհրդին է նվիրված Ս. Հովհան Մանդակունու ԻԲ ճառը, որում նա համակողմանիորեն բացատրում է Ս. Հաղորդության կարևորությունը քրիստոնյայի կյանքում և ընդգծում երկու իրողություն՝ պետք է հաճախակի և արժանապես հաղորդվել՝ անշուշտ նախապատրաստությամբ և ինքնաքննությամբ: Այս առումով նա եզակի հեղինակ է ընդհանուր հայրաբանական գրականության մեջ, որ սովյալ ժամանակաշրջանում առանձին ճառ է նվիրել հենց այս էական հարցերին: Ս. Հովհան կաթողիկոսի հորդորը հետևյալն է. «Եթե արժանի ես խորհրդին, ապա հանապազ վայելի՜ր համարձակորեն, որպեսզի Հոգով լցված, Քրիստոսին զգեցած և Քրիստոսին ընդունած լինես»: Տիրոջ Մարմնին և Արյանը հաճախակի մերձեցման նրա շեշտադրությունը կարևորվում է նաև նրանով, որ այդ ժամանակ Ընդհանրական Եկեղեցու կյանքում մշտապես հաղորդվելու սովորությունը սկսել էր տկարանալ և թուլանալ: Այս տեսանկյունից Ս. Հովհան Մանդակունին տարբերվում է շատերից՝ հավատարիմ մնալով հաղորդվելու՝ Եկեղեցու նախնական ավանդությանը, որն այսօր էլ խրախուսելի է և գովելի:

**35. Ինչպե՞ս պետք է պատրաստվել
Ս. Հաղորդությանը:**

Ընդհանրապես եկեղեցու խորհուրդները հոգևոր ազդակներ են և հնարավորություն՝ հաղորդակցվելու Աստծո հետ, զգալու նրա շնորհների հեղուճը մեզ վրա, գորանալու և ամրանալու առ Աստված մեր հավատքի մեջ: Բնականաբար, Տիրոջ Մարմինը և Արյունը ճաշակելու համար մեզանից պահանջվում է ճիգ և ջանք, քանզի մեր բերանով պետք է ճաշակենք այն Աստծուն, ով մեր փրկության համար մարմնացավ, մարդացավ, շարժարվեց, խաչվեց և երրորդ օրը հարություն առավ: Ուստի Ս. Հաղորդությունից առաջ պետք է քննենք ինքներս մեզ և մեր կյանքը, գիտակցենք մեր մեղավոր լինելը, զղջանք, ապաշխարենք և խոստովանենք մեր մեղքերը:

Շատ կարևոր է մտապահել և երբեք չմոռանալ, որ մեր ողջ գիտակցական կյանքը պետք է լինի պատրաստություն Ս. Հաղորդության համար: Քանզի շատերը կարծում են, որ հաղորդվելուց առաջ կարելի է պահք պահել, զղջալ, խոստովանել մեղքերը և վերջ: Այո՛, դրանք կարևոր նախապայմաններ են, բայց Ս. Հաղորդության բուն իմաստը քրիստոնեաբար ապրելու մեջ է: Եթե մենք ճաշակում ենք Քրիստոսին և մեր ներսում ոչինչ չի փոխվում, շարունակում ենք նույն կյանքով ապրել, նույն մեղքերի մեջ թավալվել, ապա անօգուտ և վնասակար է նման կերպով հաղորդվելը: Ս. Հաղոր-

դությունն օրհնություն է մեզ համար և Տիրոջով գորանալու միջոց և ոչ թե դատապարտություն: Բայց օրհնությունը երբեմն դատապարտության է վերածվում, երբ մենք անպատրաստ և անգիտակից ենք մոտենում Ս. Հաղորդությանը:

Ուստի հաղորդվելուց գոնե մեկ շաբաթ առաջ խորհուրդ է տրվում Ս. Գիրք և աղոթքներ ընթերցել, հեռու մնալ վատ սովորություններից, զվարճանքից, ոգելից խմիչք օգտագործելուց, որպեսզի մաքուր վիճակում մոտենանք Ս. Հաղորդությանը: Հնարավորության դեպքում անպայման մասնակցեք նաև ընդհանրական աղոթքին՝ ժամերգություններին, որպեսզի Ս. Հաղորդությունից առաջ գորանաք և գոտեպնդվեք նաև աղոթքով:

Ս. Հաղորդություն ստանալու օրը եկեղեցի պետք է գնալ առանց որևէ բան ճաշակած, այսինքն՝ սոված: Ովքեր կարող են նախորդ օրը երեկոյից ոչինչ չճաշակել և չխմել, թող այդպես Ս. Պատարագին մասնակցեն և հաղորդվեն: Ֆիզիկական պատրաստությունը ենթադրում է, որ պետք է նաև լողացած լինել, այսինքն՝ մարմնապես մաքուր:

36. Ըստ Ս. Գրիգոր Տաթևացու՝ որո՞նք են Ս. Հաղորդությանն արժանի լինելու երեք նախապայմանները:

Հայոց եկեղեցու յոթնալույս Ս. Գրիգոր վարդապետը Ս. Հաղորդությանը նվիրված իր քարոզչներից մեկում այս խորհրդին արժանի լինելու համար երեք նախապայմաններ է առաջադրում՝ հավատք, իմացություն և սրբություն:

Նախ՝ ամեն մարդ պետք է հավատա, որ ինչպես Ադամի մարմնով դատապարտվեցինք, թեպետ նրա հետ հանցանք չգործեցինք, նմանապես Քրիստոսի մարմնով սրբվում ենք, թեպետ նրա նման սուրբ չենք: Ադամի մարմնով մարդ և մարդու որդի ենք լինում, իսկ Քրիստոսի մարմնով՝ Քրիստոս և Աստծո որդի: Ադամի մարմնով երկրից ենք՝ որպես շնչավոր մարդ, իսկ Քրիստոսի մարմնով երկնքից՝ որպես հոգևոր մարդ: Ադամի մարմնով ժամանակավոր ենք և մահկանացու, իսկ Քրիստոսի մարմնով՝ անհաճ և հավիտենական:

Երկրորդ՝ այն հաստատ իմացությունն է՝ համոզումը, որ հացի ներքո Քրիստոսի Ս. Մարմինն ենք ճաշակում:

Երրորդ՝ ապաշխարությունը և խոստովանությունը սրբվում ենք մեղքերից և արժանի դառնում Քրիստոսի Մարմինը ճաշակելու: Նույն ձևով Վերնատանը հավաքված սուրբ առաքյալների համար Քրիստոսի Մարմինը կյանքի փրկություն դարձավ, իսկ անսուրբի՝ անարժան Հուդայի համար՝ դատապարտություն և մահ:

37. Ի՞նչ է ասում Ս. Պողոս առաքյալն անարժանորեն հաղորդվելու մասին:

Քրիստոսի սիրո վարդապետության մունետիկ Ս. Պողոս առաքյալը շատ հստակ զգուշացնում է մեզ. «Ով ուտի այս հացը կամ խմի Տիրոջ այս բաժակն անարժանորեն, պարտական պիտի լինի Տիրոջ Մարմնին և Արյանը: Թող մարդ նախ ինքն իրեն փորձի և ապա ուտի այդ հացից ու խմի այդ բաժակից. որովհետև, ով ուտում է և խմում անարժանորեն, իր իսկ դատապարտությունն է ուտում և խմում, քանի որ չի գատորոշում Տիրոջ Մարմինը: Դրա համար իսկ ձեր մեջ բազում հիվանդներ և ցավագարներ կան, և շատերն էլ մեռած են, որովհետև եթե մենք մեզ քննեինք, ապա չէինք դատապարտվի: Իսկ եթե դատվում ենք, ապա Տիրոջից ենք խրատվում, որպեսզի աշխարհի հետ չդատապարտվենք» (Ա. Կորնթ. 11. 27-32): Ինչպես տեսնում ենք, Ս. Պողոս առաքյալը հորդորում է Ս. Հաղորդությանը մերձենալ միայն ինքնաքննությունից հետո:

38. Ի՞նչ անեմ, երբ ինձ անարժան եմ համարում Ս. Հաղորդություն ստանալու համար:

Ցավոք, դժվար է երկրային կյանքում կատարելապես պատրաստ լինել՝ ընդունելու Տիրոջ Մարմինն ու Արյունը, եթե չասենք՝ անհնար: Մեղքի նկատմամբ հակումը, զանազան գայթակղություն-

ներն ու փորձութիւնները խոչընդոտում են հոգևոր առաջընթացին և երբեմն մեզ երկընտրանքի առաջ կանգնեցնում՝ հաղորդվել, թե ոչ: Մեկ բան հստակ է՝ հնարավոր չէ ապրել այս աշխարհում և մեղք չգործել: Հետևաբար, Ս. Հաղորդութիւնը մոտենալու անարժանութիւն զգացողութիւնը շատ բնական է հատկապես այն դեպքում, երբ քաջ գիտակցում ենք, թե երբեք էլ չենք կարողանալու մեր ամբողջ էութեամբ արժանիորեն հաղորդակից լինել Քրիստոսին, քանզի միշտ մնալու ենք անարժան: Ս. Հովհան Մանդակունի հայրապետը հորդորում է սուրբ լինել՝ «ըստ մարդկային մեր տկարության», բայց մշտապես սրբութեան և կատարելութեան ձգտում ունենալ. «Եվ արդ, ով կամենում է բնակվել Նրա մեջ, այնպես պետք է ընթանա, ինչպես Նա ընթացավ: Եվ ով այս հույսն ունենա, թե Աստված է նրա մեջ բնակվում, և նա՛ Աստծո, մարդկային տկարության չափով պետք է լինի այնպես սուրբ, ինչպես Նա էր, նոր մոտենա»:

Սխալ է նաև, երբ անարժանութեան զգացողութեամբ արդարացնում ենք մեր չհաղորդվելը կամ քիչ հաղորդվելը, քանզի ծուլանում ենք, չենք ցանկանում մեզ նեղութիւն տալ և ինչպես հարկն է պատրաստվել Ս. Հաղորդութեանը: Այս ամենին նպաստում են նաև սատանայի որոգայթները, որը չի ցանկանում տեսնել մեզ մեղքերից ձերբազատված, հոգևոր առումով ավելի հաստատուն և ուժեղ: Անկախ ամեն ինչից, մենք պետք է մոտենանք Ս. Հաղորդութեանը, Տիրոջից ուժ

և կարողութիւն խնդրենք, որպեսզի հնարավորինս պատրաստ՝ մեր ներսում ընդունենք Նրան, ով այնքան շատ է սիրում մեզ: Սեփական անարժանութեան զգացումը երբեք պատճառ չպետք է լինի, որ մարդ իր հույսը կտրի Աստծուց և ընկնի անհուսութեան մեջ, որը ծանր մեղք է: Միշտ պետք է հիշել մի պարզ ճշմարտութիւն՝ քրիստոնյայի համար Ս. Հաղորդութիւնը կենսական պահանջ է, առանց որի չի կարող ապրել Քրիստոսին հավատացողը: Մեր եկեղեցու ծիսական կյանքում ամեն տարի՝ Ավագ Հինգշաբթի օրը, ընթերցվում է Ս. Բարսեղ Կեսարացու ոգեշունչ խոսքը, որում խնդրի վերաբերյալ երանելի սուրբն ասում է. «Եվ ոչ ոք անհույս կերպով թող չհեռանա և սնոտի երկյուղը պատճառ չբերի, քանզի այն երկյուղ չէ, այլ՝ Աստծո արհամարհանք: Քանզի սա է երկնքի արքայության դուռը և նույն ինքն արքայությունը, որ Քրիստոս է՝ Աստծո Որդին և մեր Աստվածը, և սրբությանը մոտեցողներին հավիտենապես որդեգրում է երկնավոր Հորը»:

39. Ի՞նչ է ասում Գևորգ վրդ. Սկևռացին արժանաբար հաղորդվելու մասին:

Գևորգ վարդապետը Ս. Հաղորդութեանը նվիրված ճառում ընդգծում է, որ Ս. Հաղորդութեամբ մերձենում ենք Աստծուն և աստվածանում ինքներս: Աստված սուրբ է և սիրում է սրբերին՝ մաքուրներին, և նա, ով մաքրվում է իր մեղքերից, աստվածանում է,

քանզի առավել սիրում է սրբությունն ու բարին, քան պիղծ բաները: Ուստի աստվածային սեղանից ճաշակելու համար մեծ զգուշություն է հարկավոր, մեղքերի խոստովանություն և ապաշխարություն՝ «ըստ մեր կարողության», քանզի անսուրբ մարդը չի կարող սրբությանը մոտենալ: Նա նշում է, որ ինչպես ցավոտ, վնասված աչքով հնարավոր չէ արեգակին նայել, այնպես էլ Ս. Հաղորդության համար վերստին ծնվում ենք Ս. Ավագանից, դառնում քրիստոնյա և ապա ճաշակում Տիրոջ կենդանարար Մարմինն ու Արյունը:

40. Հնարավոր է մինչև վերջ հաղթահարել Ս. Հաղորդությանը մոտենալու մեր միջի երկվությունը:

Անկասկած, անհնարինը հնարավոր է դառնում Սիրոջ օգնությամբ և հավատքով: Ի վերջո՝ Ս. Հաղորդության նպատակն էլ դա է՝ սպանել մեր միջի «հին մարդուն» և «նոր արարած» դառնալ՝ հաստատուն և ամրացած մեր հավատքի մեջ:

41. Չնայած Հայոց Եկեղեցու զավակ եմ և ինձ հավատացյալ եմ համարում, բայց եկեղեցի շատ հազվադեպ եմ գնում: Յավոր չեմ հիշում, թե վերջին անգամ ե՞րբ եմ հաղորդվել:

Ս. Հակոբոս առաքյալն իր ընդհանրական թղթում ասում է. «Ինչպես մեռած է մարմինն առանց հոգու, այնպես էլ հավատքը՝ առանց գործերի» (Հակ. 2. 26): Մարդիկ տարբեր կերպ են հասկանում «հավատացյալ լինելը» արտահայտությունը: Մեր օրերում շատերն անգամ այս խոսքը նույնացնում են աղանդավորության հետ, այնինչ այն ենթադրում է աներեր հավատ Աստծո հանդեպ, ուղղափառ դավանանքի իմացություն և գործնական հավատք, այլ խոսքով՝ պատասխանատվություն, հանձնառություն և գործուն մասնակցություն Քրիստոսի Մարմնի՝ եկեղեցու կյանքին: Այս տեսանկյունից քրիստոնյայի կրավորական կեցվածքն անընդունելի է և դատապարտելի: Ճիշտ է, Մկրտությունը հոգևոր կյանքի սկիզբն է, բայց ոչ վերջը, քանզի դրանից հետո էլ մենք հաճախ մեղքեր ենք գործում: Բայց երբ ապաշխարում ենք և հաղորդվում, ներվում են մեղքերը և կրկին հարուխյան հույսն է արթնանում մեր մեջ: Ս. Հաղորդությունը հենց այն հոգևոր կերակուրն է, որը մեզ անհրաժեշտ է մշտապես: Հիսուս շատ հստակ ասել է, որ առանց Իր Մարմինն ու Արյունը ճաշակելու, չենք կարող երկնքի արքայություն մտնել, ասել է թե՛ փրկվել: Հետևաբար՝ առանց Ս. Հաղորդության չկա քրիստոնյայի կյանք: Եթե մեկն իրեն հավատացյալ է համարում, ապա պետք է գործնականում ցույց տա դա, քանզի Վերջին դատաստանի ժամանակ մեր փոխարեն խոսելու են մեր գործերը:

**42. Հանախ կարելի է լսել նման ար-
դարացում՝ մոռացել և մեկ գազաթ սուրճ
խմել, կարո՞ղ եմ հաղորդվել:**

Ասանլուրջ մոտեցում է Ս. Հաղորդությանը, քան-
զի քրիստոնյան միշտ պետք է զգոն, աշալուրջ և
ավելի խստապահանջ լինի հատկապես իր հանդեպ:
Եթե մարդ գիտե, որ վաղը կամ որևէ օր Ս. Հաղորդութ-
յուն պիտի ստանա, ապա պարտավոր է պատրաստվել
իր ուժերի չափով՝ ուշադրություն դարձնելով ամեն
ինչի, այս դեպքում երկրորդական կամ ավելորդ բա-
ներ չկան: Հնարավոր չէր դիմանալ գայթակղությանը
և առավոտյան հրաժարվել ավանդական սուրճից կամ
թեյ խմելուց. իհարկե անհնար չէ: Երբեմն ծուլութ-
յունը, անզգոնությունը մեզ շեղում են ճշմարիտ ճա-
նապարհից: Նման դեպքերում ավելի լավ է չհաղորդ-
վել, որպեսզի հաջորդ անգամ պատրաստ մոտենանք
Ս. Հաղորդությանը:

**43. Կարո՞ղ եմ նույն օրը մի քանի ան-
գամ հաղորդվել տարբեր եկեղեցիներում:**

Ա՛յ: Օրվա մեջ մեկ անգամ հաղորդվելը լիովին բա-
վարար է: Եթե Ս. Պատարագի ժամանակ մի քանի
սկիհներից են Ս. Հաղորդությունը բաշխում, ապա այդ
դեպքում ևս պետք է միայն մեկ սկիհից հաղորդվել:

**44. Ինչպե՞ս պետք է պահել Ս. Հաղոր-
դություն ստանալու օրը:**

Քրիստոնյայի համար այդ օրը նվիրական է և
Բառանձնահատուկ՝ իր նշանակությամբ, բովան-
դակությամբ՝ հատկապես հաշվի առնելով Ս. Հաղոր-
դության խորհրդի կարևորությունը: Այն անպայման
պետք է տարբերվի մյուս սովորական օրերից՝ ամեն
ինչով: Երբ մի պահ մարդկային տկար մտքով գիտակ-
ցում ես և հասկանում, որ պետք է ճաշակես Հիսու-
սին և հաղորդակցվես Աստծո հետ, սիրտդ իսկապես
ուրախությամբ է լցվում: Տիրոջ Մարմինն ու Արյունը
ճաշակելը հոգևոր տոն է մեզ համար: Ուստի այդ օրը
խորհուրդ է տրվում աղոթքով և հոգևոր առանձնութ-
յամբ անցկացնել, Ս. Գիրք կամ հոգեշահ գրականութ-
յուն կարդալ: Իսկ Ս. Հաղորդությունից հետո գոհութ-
յուն հայտնել Աստծուն այդ շնորհին արժանացնելու
համար՝ խնդրելով Ամենակարողից մեզ ետ պահել
մեղանչելուց: Այդ նույն հոգևոր մթնոլորտը պետք է
փորձել պահպանել ամբողջ օրվա ընթացքում: Անըն-
դունելի է Ս. Հաղորդություն ստանալուց հետո դուրս
գալ եկեղեցուց և սկսել վատ բաներ անել:

**45. Կարելի՞ է հաղորդվել Մեծ Պահքի
ընթացքում:**

Մեծ Պահքը զղջման, ապաշխարության և ներհա-
յեցողության շրջան է քրիստոնյայի կյանքում,

երբ Եկեղեցու Ս. Խորանները ծածկված են, այսինքն՝ խորհրդաբանորեն մեր առաջ փակ են դրախտի դռները, ուստի Ս. Հաղորդություն չի տրվում: Թե երբ է ծիսական այս սովորությունը մեր Եկեղեցում հաստատվել, դժվարանում ենք ասել: Մինչդեռ մյուս Եկեղեցիները հավատացյալներին հորդորում են հաճախակի հաղորդվել հենց Մեծ Պահքի ընթացքում՝ հոգևոր առումով գորացած սպասելով Տիրոջ հրաշափառ Հաղորդյան ավետիսին:

46. Իսկ բացառություններ չկա՞ն:

Մեծ Պահքի ընթացքում Ս. Հաղորդություն տրվում է մի քանի բաց Պատարագների ժամանակ, այսինքն՝ Ս. Գրիգոր Լուսավորչի՝ Խոր Վիրապ մուտքին, Ծաղկազարդին և Ավագ Հինգշաբթի օրը: Եթե ապրիլի 7-ը՝ Ս. Մարիամ Աստվածածնի ավետման տոնը, հանդիպում է այս շրջանում, ապա այդ օրը նույնպես Ս. Հաղորդություն է բաշխվում:

47. Արդյո՞ք դաշտանի ժամանակ կնոջը կարելի է հաղորդվել:

Այս հարցը կարևոր է, բայց միևնույն ժամանակ վիճահարույց մեր օրերում, ուստի յուրաքանչյուր հոգևորականից պահանջվում է նրբանկատություն և համապատասխան մոտեցում՝ բացատրելու և ընկալելի դարձնելու Եկեղեցու տեսակետը: Պետք է նշենք, որ

հոգևորականների շրջանում նույնպես կարծիքները տարբեր են. մի մասը թույլատրում է Ս. Հաղորդութուն ընդունել, մինչդեռ մյուսներն ավելի խիստ են և կտրականապես դեմ: Խնդրի ընկալումը և գործնական կիրառումը տարբեր է նաև Հայաստանում և սփյուռքի մեր թեմերում: Դաշտանի մեջ գտնվող կնոջը Ս. Հաղորդություն տալ կամ չտալը քննարկման նյութ է նաև Ուղղափառ Եկեղեցիներում և աստվածաբանների շրջանում: Երկու տեսակետներն էլ ունեն իրենց պաշտպաններն ու ընդդիմախոսները:

Դաշտանը բնական երևույթ է և հատուկ միայն իգական սեռին, որի ընթացքում կինը բազում անհարմարություններ է զգում և ցավեր ունենում: Շատերի կարծիքով, երբ Եկեղեցին նրան Ս. Հաղորդություն չի տալիս, ասես բազմապատկում է նրա՝ առանց այդ էլ ցավազին վիճակը և մի տեսակ խտրականություն դնում սեռերի միջև: Անմաքրության շրջանում կնոջը Ս. Հաղորդություն չտալու հիմնական պատճառն այդ վիճակում սրբությանը մոտենալու արգելքն է (տես Ղևտ. 15. 19-33), ինչպես նաև Եկեղեցում արյան ծորման բացառումը: Վերջին պատճառաբանությունը երկրորդական է այժմ, քանզի ժամանակակից աշխարհում կան հիգիենայի պահպանման բոլոր անհրաժեշտ միջոցները՝ խնամված և մաքուր վիճակում Եկեղեցի գնալու համար:

Հին Կտակարանի մեկ այլ օրենքով անմաքուր էր համարվում նաև նոր ծննդաբերած կինը, ուստի չէր

կարող եկեղեցի մտնել 40 օր (տե՛ս Ղևտ. 12. 2-6): Սա է պատճառը, որ երբ մանկանը մկրտում են 8 օրականում, մայրն անմաքրության պատճառով չի կարող մասնակցել եկեղեցական արարողությանը: Անմաքրության այս արգելքը հատուկ է ոչ միայն հրեաներին, այլ նաև ուրիշ ազգերի, որն արտացոլված է նաև գեղարվեստական գրականության, մարդկանց հավատալիքների և մտածողության մեջ:

Ծիսական անմաքրության խնդիրն այլ կերպ է մեկնաբանվում Նոր Ուխտի լույսի ներքո: Հիսուս Ս. Հաղորդության խորհուրդը հաստատելիս որևէ խտրականություն չդրեց սեռերի միջև, այլ պատվիրեց բոլորին անխտիր հաղորդվել: Սեռերի հավասարության մասին է բազմիցս խոսում նաև Ս. Պողոս առաքյալն իր թղթերում:

Խնդրի մասին զանազան կարծիքներ են հայտնում նաև եկեղեցու հայրերը և քրիստոնեական հեղինակները: Օր. Ս. Աթանաս Ալեքսանդրացին վանականներից մեկին գրված նամակում շեշտում է, որ մարդու մեջ որևէ անմաքուր բան չկա: Իսկ Ս. Հովհան Ոսկեբերան հայրապետը (347-407) քննադատում էր նրանց, ովքեր արգելում էին կնոջը դաշտանի ժամանակ հաղորդվել՝ նրանց անվանելով քրիստոնեական հավատքի անարժաններ և սնահավատներ: Ի պաշտպանություն Ս. Հաղորդություն ստանալուն հաճախ վկայակոչվում է նաև Նոր Կտակարանի այն հատվածը, երբ

Հիսուս բժշկում է արյունահոսող կնոջը (տե՛ս Մատթ. 9. 20-22):

Բացի սուրբգրային արգելքից, դաշտանի ընթացքում հաղորդվելն արգելող կանոնական որոշումներ կան նաև Ուղղափառ և մեր եկեղեցու «Կանոնագրքերում»: Մասնավորապես «Կանոնագիրք հայոց»-ի «Կանոն հարանց հետևողաց» կանոնախմբի ԻԳ կանոնն անդրադառնում է այս խնդրին և նշում, որ եթե մեկն արյունահոսություն ունի, ապա չպետք է երեք օր Ս. Հաղորդություն վերցնի: Իսկ այն տղամարդը, որ երազախար է եղել մարմնի բնական գործունեության արդյունքում և ոչ թե պոռնիկական խորհրդի, կարող է Ս. Հաղորդությանը մերձենալ: Իսկ Ս. Բարսեղ Կեսարացու ձժԹ կանոնում շեշտվում է, որ եկեղեցուն չի կարող մոտենալ արյունահոսող և նոր ծննդաբերած կինը:

Եթե ամփոփենք վերոգրյալը, ապա պիտի արձանագրենք, որ սուրբգրային և կանոնական առումով կինը դաշտանի ժամանակ չի կարող հաղորդվել: Քանի դեռ նոր կանոնական որոշում կամ հայրապետական կոնդակ չկա այս մասին, ուժի մեջ են նախկին որոշումները: Ուստի կանաչք այս հարցում պետք է ըմբռնումով մոտենան խնդրին և երբեք դրա մեջ չտեսնեն որևէ խտրականություն: Մեր խորհուրդն է, որ եթե դաշտանի մեջ էք և խիստ կարիք ունեք հաղորդվելու, ապա նախապես դիմեք Ձեր հոգևոր հորը կամ պատարագիչ հոգևորականին և նոր Ս. Հաղորդություն ստացեք:

48. Ո՞ւմ պետք է խոստովանել մեղքերը:

Միայն քահանայական ձեռնադրություն և օծում ունեցող հոգևորականին, որը կարող է լինել և՛ ամուսնացյալ, և՛ կուսակրոն, այսինքն՝ քահանա, աբեղա, վարդապետ, ծայրագույն վարդապետ, եպիսկոպոս, արքեպիսկոպոս, պատրիարք և կաթողիկոս: Նրանք առաքյալների իրավահաջորդն են, և Տիրոջ կենդանի խոսքի համաձայն՝ բացառապես նրանց է տրված մարդկանց մեղքերն արձակելու կամ կապելու իշխանությունը. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, ինչ կապեք երկրի վրա, կապված կլինի երկնքում: Եվ ինչ արձակեք երկրի վրա, արձակված կլինի երկնքում» (Մատթ. 18. 18): Երբ մեր Տերը հարությունից հետո երևաց Իր աշակերտներին, մարդկանց մեղքերին թողություն տալու իշխանություն տվեց նրանց՝ ասելով. «Առեք Սուրբ Հոգին: Եթե մեկի մեղքերը ներեք, ասպ ներված կլինեն, եթե մեկի մեղքերը չներեք, ասպ ներված չեն լինի» (Հովհ. 20. 22-23):

49. Խոստովանության քանի՞ տեսակ կա մեր եկեղեցում:

Էրկու՝ անհատական և ընդհանրական:

50. Ո՞րն է անհատական խոստովանությունը:

Անհատական կամ առանձնական խոստովանություն ժամանակ մարդ գնում է քահանայի մոտ, նրան խոստովանում իր գործած մեղքերը, որի վերջնական արդյունքում մեղքերի թողություն է ստանում հոգևորականից հատուկ բանաձևի միջոցով: Ապա միայն դրանից հետո նրան թույլատրվում է Ս. Հաղորդություն մոտենալ: Անշուշտ, անհատական խոստովանությունը վկայում է տվյալ մարդու հոգևոր բարձր գիտակցության մասին. չէ՞ որ մարդկայնորեն դժվար է գնալ և մեզ նմանին պատմել մեր մեղքերը և գործած հանցանքները: Խրախուսելի է, որ հատկապես ծանր մեղքերի դեպքում քրիստոնյան անպայման անհատական խոստովանություն գնա և ոչ թե ընդհանրական: Մեկ բան էլ՝ ներվում են բոլոր այն մեղքերը, որոնք մենք խոստովանում ենք:

51. Ի՞նչ է ընդհանրական խոստովանությունը:

Ընդհանրական խոստովանությունը եկեղեցում կատարվում է կամ Ս. Պատարագից առաջ, կամ էլ ընթացքում, երբ բոլորը ծնկի են գալիս քահանայի առաջ, և հավատացյալներից մեկը բարձրաձայն կարդում է բազմազան մեղքերի խոստովանության մի աղոթք՝ ամեն մի պարբերությունից հետո ասելով «Մեղա՛ Աստծո» (մեղանչեցի Աստծո դեմ), իսկ հոգևորականը պատասխանում է. «Աստված թող թողություն

շնորհի»։ Խոստովանության վերջում հոգևորականն իրեն տրված իշխանության մեջ թողնելու է տալիս ներկաների մեղքերին, և խոստովանության մասնակիցներին հնարավորություն է ընձեռվում ճաշակելու Քրիստոսի Մարմինն ու Արյունը։ Դժբախտաբար, մարդն ի վիճակի չէ հիշելու իր բոլոր մեղքերը և խոստովանելու, ուստի Ս. Գրիգոր Նարեկացին դավանաբանական իր խրատում ասում է. «Ինչ հիշեց, խոստովանեց և ապաշխարեց, այդքանով սրբվեց, և ինչ էլ չկարողացավ հիշել, այն Քրիստոսի Մարմինն ու Արյունն է սրբում»։

52. Կարո՞ղ է քահանան խոստովանությունն ուրիշի հայտնել։

Ո՞չ։ 554 թ. տեղի ունեցած Դվինի Բ ժողովի 19-րդ կանոնում հստակ նշվում է, որ եթե քահանան խոստովանությունը պատմի մեկ այլ մարդու, ապա կզրկվի քահանայական իր կարգից։ Խոստովանության գաղտնիությունը և ոչ հրապարակելի լինելն ամրագրված են նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով (հոդ. 86. 5)՝ արձանագրելով, որ խոստովանահայրը որպես վկա չի կարող կանչվել կամ հարցաքննվել։

53. Ո՞ր դեպքերում քահանան կարող է Ս. Հաղորդություն չտալ ցանկացողին։

Եթե տվյալ մարդն ապաշխարության մեջ է կամ ֆիզիոլոգիական առումով անմաքուր է, ապա քահանան չի կարող Ս. Հաղորդություն տալ։ Բնականաբար, Ս. Հաղորդություն չի կարելի տալ նաև չմկրտվածին, քանզի նա եկեղեցու անդամ չէ։ Եթե քահանան ճանաչում է տվյալ մարդուն և գիտե, որ նա ծանր մեղքի մեջ է և չի զղջացել, ապաշխարել և խոստովանել կամ չի հավատում, որ սրբագործված հացն ու գինին Տիրոջ Մարմինն ու Արյունն են, ապա այդ դեպքերում նույնպես չպետք է Ս. Հաղորդություն տա։

54. Ս. Հաղորդությունը բոլորին տրվում է նույն բաժակից, վտանգ չկա՞ հիվանդանալու կամ վարակվելու։

Տայսօր որևէ դեպք հայտնի չէ Ընդհանրական եկեղեցու պատմության մեջ, որ Հաղորդության պատճառով մարդ հիվանդանա կամ ինչ-որ վարակ ձեռք բերի։ Մարդիկ հաղորդվել են անգամ համաճարակների ժամանակ, բայց չեն հիվանդացել։ Չպետք է մոռանալ, որ եկեղեցու այս խորհուրդը նաև բժշկող գործունեություն ունի։ Աներեբ հավատքով և ոչ թե կասկածամտությամբ պետք է մոտենալ Ս. Հաղորդությանը։ Իսկ մեր մեջ նման մտքեր կամ թերահավատություն է սերմանում հենց սատանան, որպեսզի քիչ կամ ընդհանրապես չհաղորդվենք։ Բացի այդ, սկիհի մեջ մնացած Ս. Հաղորդությունը վերջում ճաշակում է

պատարագիչ հոգևորականը: Եթե նման վտանգ լիներ, ապա բազում հոգևորականներ այդ պատճառով կենդանի չէին լինի:

55. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդներին կառելի՞ է Ս. Հաղորդություն տալ:

Խնդիրն իսկապես նուրբ է և նոր մարտահրավեր ոչ միայն աշխարհի, այլ նաև հոգևորականների համար, որոնք ամեն ինչ պետք է անեն նման մարդկանց օգնելու, նրանց մեջ մեղքի գիտակցությունն արթնացնելու, ապաշխարության կոչելու՝ միաժամանակ դրսևորելով անսահման սեր և կարեկցանք, հույս ներշնչելով կյանքի հանդեպ և նպաստելով հասարակության մեջ նրանց ամբողջական ինտեգրմանը: Պետք է գիտենալ, որ ՄԻԱՎ-ը մարդու իմունային անբավարարության վիրուսն է, որի վերջնական փուլը ՁԻԱՀ-ն է՝ ձեռքբերովի իմունային անբավարարության համաախտանիշը: ՄԻԱՎ-ը մարդուն փոխանցվում է սեռական ճանապարհով, արյան միջոցով, ինչպես նաև վարակակիր մոր միջոցով: Այն չի փոխանցվում օդի, ջրի, սննդամթերքի և կենցաղային առարկաների միջոցով: Այլ խոսքով՝ հնարավոր չէ վարակվել ՄԻԱՎ-ով, երբ շփվում ես վարակակրի հետ, ձեռքով նրան բարևում, գրկախառնվում, համբուրվում, օգտվում նրա անկողնային պարագաներից և հագուստից, լողավազանից, սանհանգույցից և այլն: Այս վարակը

հնարավոր չէ ձեռք բերել նաև խաչ կամ սրբապատկեր համբուրելիս և Ս. Մկրտության Ավագանի ջրի միջոցով: Ուստի եկեղեցու հորդորը մեկն է՝ ժուժկալություն և հավատարմություն, որոնց դեպքում միայն պաշտպանված կլինենք 21-րդ դարի այս «ժանտախտից»: Ի վերջո, այս վարակի պատճառը մեղքն է, հասարակությունների բարոյական անկումն ու հոգեզուրկ վիճակը, երբ «ազատության» աստվածադիր շնորհի ներքո քարոզվում է սանձարձակություն և ամենաթողություն:

Հայոց եկեղեցին այս հարցում որևէ պաշտոնական դիրքորոշում դեռ չի արտահայտել, բայց մի քանի հոգևորականներ, վերապատրաստվելով և համապատասխան գիտելիքներ ձեռք բերելով, հոգևոր խնամք են տանում և աշխատում նմանատիպ մարդկանց հետ: Եթե մարդը մկրտված է, զղջացել է իր կատարած մեղքերի համար, ապաշխարել և ցանկություն ունի Ս. Հաղորդություն ստանալու, ապա չենք կարող մերժել նրան: Քրիստոնյան պետք է հավատա Ս. Հաղորդության բժշկող զորությանը, իսկ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդներն առավել կարիքն ունեն Տիրոջով զորանալու և իմաստավորելու հետագա իրենց կյանքը: 2004 թ. հոկտեմբերի 1-ին Ռուս Ուղղափառ եկեղեցու Ս. Սինոդը հավանություն տվեց ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածման դեմ և նմանատիպ մարդկանց հետ աշխատանքի մասին հայեցակարգին, որում (Բ գլ. հոդ. 1) արտոնվում է նման մարդկանց Ս. Հաղորդություն տալը:

56. Կարո՞ղ եմ հաղորդվել առանց մեղքերի խոստովանության, եթե անգամ շատ եմ ցանկանում:

Այն քանզի առանց մեղքերի անհատական կամ ընդհանրական խոստովանության, չի կարելի մոտենալ Ս. Հաղորդությանը: Հոգևոր կյանքում զորանալու համար նախ անհրաժեշտ է մաքրվել մեղքերից և ապա նոր ճաշակել Տիրոջ Մարմինն ու Արյունը: Այլապես այդ Ս. Հաղորդությունը մեզ համար կդառնա ոչ թե օրհնություն, այլ՝ դատապարտություն: Ուստի հոգևոր մաքրություն, ամենայն լրջությամբ, պատասխանատվությամբ և հավատքով պետք է Ս. Հաղորդություն ստանալ: Հիշենք նաև Ս. Պողոս առաքյալի խրատն այս մասին (տես Ա. Կորնթ. 11. 27-32):

57. Մինչև ո՞ր տարիքը երեխաները կարող են հաղորդվել առանց խոստովանության:

Լստ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի մեջ գետեղված Ս. Բարսեղ Կեսարացու կանոնական գրի (կանոն 131)՝ մինչև 15 տարեկան գործված մեղքերը ջնջվում են՝ համարվելով իբրև մանկության և անգիտության շրջանում գործվածներ. «Մի՛ հիշիր իմ մանկության և անգիտության շրջանի մեղքերը» (Սաղմ. 24. 7): Այս կանոնից հետևում է, որ մինչ այդ տարիքը որևէ մեկը պարտադրված չէ խոստովանել և կարող

է Ս. Հաղորդություն ստանալ: Բայց Երզնկայի դպրոցի նշանավոր բաբունապետ Հովհաննես Երզնկացի Պլուզը († 1293) իր «Խրատ հասարակաց» աշխատության մեջ, անդրադառնալով երեխայի քրիստոնեական դաստիարակությանը, իբրև խոստովանության տարիք, նշում է 7 տարեկանը: Միջնադարյան այս ընկալումն արդեն ամրագրված և զետեղված է «Մայր Մաշտոցում»՝ ծայրագույն վարդապետական աստիճանի տվչության ծիսակարգից հետո, աստվածաբան, տաղերգու Առաքել եպս. Սյունեցու (ԺԴ-ԺԵ դդ.) և Ս. Գրիգոր Տաթևացու անվամբ:

Ուղղափառ եկեղեցում նույնպես 7 տարեկանից խրախուսվում է երեխաների մեղքերի խոստովանությունը: Անշուշտ, ամեն մի երեխա անհատականություն է և տարբերվում է մյուսից իր ֆիզիկական կամ մտավոր հասունությամբ: Իսկ խոստովանության համար անհրաժեշտ է մեղքի գիտակցություն ունենալ: Այս հարցում շատ կարևոր է ծնողների և հոգևոր հոր՝ քահանայի անհատական մոտեցումը յուրաքանչյուր երեխայի: Կարծում ենք, որ երեխաները կամ պատանիները Ս. Հաղորդությունից առաջ ընդհանրական խոստովանության պիտի մասնակցեն այն ժամանակ, երբ տվյալ մարդու մոտ սկսում է սեռական հասունացման շրջանը, երբ առաջանում է ֆիզիոլոգիական անմաքրության խնդիրը:

58. Հիվանդները և հղիները կարո՞ղ են Ս. Հաղորդությունից առաջ ինչ-որ բան ուտել:

Այո, եթե ուտելն իսկապես անհրաժեշտություն է և այլ կերպ հնարավոր չէ: Օր.՝ կան հիվանդներ, որոնք բժշկի կողմից սահմանված հատուկ ժամերի պետք է դեղորայք ընդունեն, բայց դրանից առաջ նաև ինչ-որ բան պետք է ճաշակեն: Կամ՝ հղի կանայք պարտավոր են նորմալ և կանոնավոր սնվել և չեն կարող երկար ժամանակ սոված մնալ, որպեսզի չվնասեն պտղին և առողջ զավակ ունենան: Ուստի այս դեպքերում նմանատիպ մարդկանց եկեղեցին չի զրկում Ս. Հաղորդությունից և թույլատրում է հաղորդվել:

59. Քահանան կարո՞ղ է Ս. Հաղորդություն տալ կոմայի (անհասքուն) մեջ գտնվող մարդուն:

Նման դեպքի մասին կանոնական որևէ որոշում չունենք: Եթե մահաքնի մեջ գտնվող անհատը մկրտված չէ, բայց ցանկություն է ունեցել մկրտվելու և քրիստոնյա դառնալու, ապա նրա հարազատների կամ մտերիմների խնդրանքով քահանան կարող է մկրտել և շրթնահաղորդ անել: Ուստի այս տեսանկյունից, եթե տվյալ մարդու հազարատները դիմեն հոգևորականին, նա չպետք է մերժի, այլ այցելի հիվանդին և շրթնահաղորդ անի: Ո՞վ գիտե, գուցե Ս. Հաղորդութ-

յան կենդանություն պարզևող զորությունն իսկապես նման վիճակում գտնվողի համար դառնա բժշկության աղբյուր:

60. Ե՞րբ է մարդ կյանքում առաջին անգամ Ս. Հաղորդություն ստանում:

Ս. Մկրտության ժամանակ, երբ չմկրտված անձը մաքրվում է ադամական կամ սկզբնական մեղքից՝ դառնալով Եկեղեցու անդամ, քրիստոնյա և Ս. Հոգու տաճար: Ս. Մկրտությանն անմիջապես հաջորդող Ս. Դրոշմի խորհրդի ընթացքում՝ երկրպագությունից հետո, առաջին անգամ նոր մկրտվածը Ս. Հաղորդություն է ստանում: Այն խորհրդանշում է քրիստոնյայի ամբողջական անդամակցությունը Եկեղեցուն: Եթե մկրտվողը չափահաս է, ապա եկեղեցականը Ս. Հաղորդությունը դնում է նրա բերանի մեջ, իսկ եթե նորածին է, ապա շրթնահաղորդ է անում:

61. Ի՞նչ է ասում քահանան, երբ նոր մկրտվածին առաջին Ս. Հաղորդություն է տալիս:

Քանի որ Եկեղեցու Ս. Ավագանից ծնված քրիստոնյան տվյալ պահին ամենամաքուրն է, մկրտող հոգևորականը նրան հաղորդելիս ասում է. «Մեր Տեր և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Մարմինն ու Ար-

յունը թող քեզ համար փրկություն և առաջնորդ լինի անվախճան կյանքում»:

62. Մ. Պատարագի ժամանակ ո՞ր պահին է բաշխվում Ս. Հաղորդությունը:

Երբ դպրաց դասը երգում է «Քրիստոս պատարագվելով՝ բաշխվում է մեր մեջ», պատարագիչ հոգևորականը ծածուկ աղոթում է, խաչակնքում իրեն և ճշմարիտ Աստծուն խնդրանքներով գիմում իր, ժողովրդի և աշխարհի խաղաղություն համար, թողություն հայցում թշնամիների և իրեն ատողների համար: Ապա պատարագիչ հոգևորականը երկյուղածությամբ ճաշակում է Տիրոջ Մարմնից և խմում Բաժակից՝ վերջում ասելով. «Անապական Մարմինդ թող կյանք լինի ինձ համար, իսկ սուրբ Արյունդ՝ մեղքերիս քավություն և թողություն»: Դրանից հետո բացվում է խորանի վարագույրը, և սարկավազը բարձրաձայն ասում է. «Երկյուղով և հավատքով մոտեցե՛ք և սրբությամբ հաղորդվե՛ք»: Այս հրահանգից հետո նրանք, ովքեր նախապես պատրաստվել են, զղջացել, ապաշխարել և խոստովանել իրենց մեղքերը, մոտենում են Ս. Հաղորդության ստանալու:

63. Ի՞նչ պետք է ասել Ս. Հաղորդություն ստանալիս:

Երբ Ս. Պատարագի ժամանակ մարդ մոտենում է Ս. Հաղորդության ստանալու, նախ խաչակնքում է և ապա բացում բերանը՝ ասելով. «Մեղա՛ Աստծո՛ւ»: Իսկ պատարագիչ հոգևորականը, Ս. Հաղորդությունը բերանի մեջ դնելով, պատասխանում է. «Մա թող լինի մեղքերիդ քավության և թողության համար»:

64. Ի՞նչ տեսքով պետք է մոտենալ Ս. Հաղորդությանը:

Եկեղեցին Աստծո տունն է, հետևաբար՝ Տիրոջը ներկայանալու համար ամեն ոք պետք է լինի պատշաճ հագնված. տղամարդիկ՝ սափրված, եթե իհարկե բեղ կամ մորուք չեն պահում, իսկ կանայք՝ պարկեշտ զգեստներով և գլխաշորով, ինչպես նաև՝ առանց շպարի և շրթների: Արարողության ընթացքում պետք է անջատել բջջային հեռախոսները, չխոսել և չզրուցել՝ աղոթական մթնոլորտը չխաթարելու և մյուսներին չխանգարելու համար: Միշտ պետք է հիշել՝ եկեղեցին հագուստները կամ մեզ ցուցադրելու, մյուսներին զարմացնելու կամ գայթակղելու տեղ չէ, այլ՝ մարդ-Աստված հանդիպման վայրը, որտեղ մարդիկ գալիս են՝ աղոթելու, աստվածաշուտությանը մասնակցելու և իրենց սիրտն ու հոգին բացելու Աստծո առաջ: Իսկ Ս. Պատարագը եկեղեցու ամենակարևոր արարողությունն է, ուստի այդ խորհրդին պետք է մոտենալ լրջությամբ, հավատքով և երկյուղածությամբ:

65. Սկզբից տղամարդի՞կ, թե՞ կանայք պետք է մոտենան հաղորդվելու:

Ավանդության համաձայն՝ տղամարդիկ, այդպես է նաև Ս. Ավետարանը համբուրելիս:

66. Ինչպե՞ս են հաղորդվում ձեռնադրություն և օծում ունեցող հոգևորականները, եթե նրանք պատարագիչ չեն:

Իտարբերություն աշխարհականների՝ նրանք բարձրանում են խորան և հաղորդվում վարագույրի ետևում: Պատարագիչ եկեղեցականը Ս. Հաղորդությունը դնում է սուլյալ հոգևորականի ձեռքի ափի մեջ, քանզի նրանց ձեռքերն օծված են Ս. Մյուսոնով: Եթե հոգևորականը հիվանդ է և չի կարող այցելել եկեղեցի, ապա մեկ այլ հոգևորական Ս. Հաղորդություն է տալիս նրան տանը կամ այլ տեղում:

67. Հոգևորականները նույնպես խոստովանո՞ւմ են Ս. Հաղորդություն ստանալուց առաջ:

Իհարկե, նրանք էլ բոլորի նման պարտավոր են անցնել ապաշխարության շրջանը, մեկ այլ հոգևորականից մեղքերի թողություն ստանալ և նոր հաղորդվել: Պարզապես հոգևորականների դեպքում պահանջներն ավելի խիստ են, քանզի ում շատ է

տրված, նրանից էլ, բնականաբար, Աստված ավելին է պահանջում:

68. Արդյո՞ք կարելի է քահանայից Ս. Հաղորդություն վերցնել և տուն տանել:

Ոչ մի դեպքում: Ս. Հաղորդությունը սրբություն է՝ մեր Տիրոջ ճշմարիտ Մարմինն ու Արյունը, որին կարող է դիպչել միայն քահանայական ձեռնադրություն և օծում ունեցող հոգևորականը: Նույնիսկ եկեղեցու ավելի խոնարհ աստիճանի սպասավորները՝ դպրից մինչև սարկավագ, իրավունք չունեն Ս. Հաղորդությունը ձեռքով վերցնել կամ ուրիշին տալ:

69. Ինչպե՞ս վարվել, երբ տանը հիվանդ կա, որը չի կարող եկեղեցի այցելել, բայց ցանկանում է հաղորդվել:

Մի՛ անհանգստացեք, պարզապես պետք է գնալ մոտակա եկեղեցին և քահանային խնդրել, որ այցելի Ձեր հիվանդին՝ Ս. Հաղորդություն տալու համար:

70. Մոտավոր հիվանդներին կարելի՞ է Ս. Հաղորդություն տալ:

Ամեն դեպքում կանոնական որևէ արգելք չկա այս մասին և կարելի է Ս. Հաղորդություն տալ: Ըստ

Աթանաս Մեծի Գ կանոնի՝ մտավոր հիվանդներին կարելի է մկրտել և եկեղեցու անդամ դարձնել, որն իր լրումին է հասնում Ս. Հաղորդության ճաշակմամբ: Եթե մկրտությունն արգելված չէ, ապա ուրեմն պետք է նաև չզրկել Ս. Հաղորդությունից, որով քրիստոնյան պիտի ուժ ստանա և ապրի: Հոգևոր փորձառությունը կարող ենք փաստել, որ երբեմն ծնողները կամ հարազատները եկեղեցի են բերում նմանատիպ մարդկանց և քահանային խնդրում աղոթք անել և Ս. Հաղորդություն տալ: Քանի որ մենք հավատում ենք Ս. Հաղորդության կենդանացնող և բժշկող գործությանը, ինչպես զրկենք այդպիսիներին Տիրոջը ճաշակելուց: Չէ՞ որ նրանք ամենաշատը դրա կարիքն ունեն: Բազմաթիվ վկայություններ կան, երբ մտավոր խնդիրներ ունեցող մարդիկ կամ գիվահարներ բժշկվել են հենց Ս. Հաղորդություն ստանալու արդյունքում:

71. Ի՞նչ այլ բացառություններ կան, երբ Ս. Հաղորդություն է տրվում Ս. Պատարագից դուրս:

Բանի որ Ս. Հաղորդությունը կենսական անհրաժեշտություն է քրիստոնյայի համար, եկեղեցին դրանից չի զրկում նաև նրանց, ովքեր ֆիզիկապես չեն կարող մասնակցել Ս. Պատարագին և հաղորդվել, օր. բանտարկյալներին, բանակի զինվորներին, հիվանդներին և այլն:

72. Ի՞նչ է վերջին Ս. Հաղորդությունը:

Երբ քահանան մահամերձին խոստովանեցնում է և վերջին անգամ Ս. Հաղորդություն տալիս: Այն վերջին թոշակն է հավիտենական կյանքի համար: Դրա համար «Մաշտոց» ծիսական ժողովածուի մեջ հատուկ կարգ կա սահմանված՝ «Կանոն Հաղորդություն տալու», որը բաղկացած է սաղմոսներից, Հին Կտակարանի ընթերցվածքից, Ավետարանից, աղոթքից, շարականներից և հավատքի խոստովանությունից:

73. Ս. Պատարագին պետք է մասնակցել սկզբի՞ց, թե՞ կարելի է նաև կեսից գալ:

Եկեղեցում կատարվող ամեն մի խորհրդի կամ արարողությանը պետք է մասնակցել հենց սկզբից, քանզի դրանցում երկրորդական հատվածներ չկան, դրանք բոլորն էլ օգտակար են մեր հոգու համար և շաղկապված են իրար՝ կազմելով մեկ ամբողջություն: Ուստի Պատարագի սրբազան արարողությանը հարկ է մասնակցել սկզբից: Կավ կլինի, եթե Ձեր ձեռքում ունենաք նաև «Պատարագամատուց»՝ արարողությանը հետևելու համար:

74. Կարելի՞ է եկեղեցուց դուրս գալ Ս. Հաղորդությունը ստանալուց հետո:

Ընդհանրապես Ս. Պատարագին պետք է մասնակցել սկզբից մինչև վերջ, այսինքն՝ մինչև այն պահը, երբ քահանան վերջին օրհնությունն է տալիս ներկաներին: Խրախուսելի և հոգևոր տեսանկյունից էլ ճիշտ չէ Աստծո տնից դուրս գալ արարողության ընթացքում՝ խորհուրդը կիսատ թողնելով: Ս. Հաղորդության բաշխումից մի քանի րոպեներ հետո ավարտվում է Ս. Պատարագը: Կարծում ենք՝ անհնար չէ փոքրինչ համբերություն ունենալ և ավարտից հետո միայն դուրս գալ եկեղեցուց: Եկեղեցու հայրերը միշտ հորդորում են Ս. Պատարագին ոչ միայն պատրաստվել ամբողջականորեն, այլ նաև ներկա լինել ամբողջ ընթացքում՝ աղոթքով մասնակցելով դրան: Օր.՝ Ս. Հովհան Ոսկեբերանն իր ճառերից մեկում շատ խիստ է արտահայտվում այս մասին: Նա նշում է, որ Ս. Պատարագը կեսից լքողները նմանվում են Հուդային և Տիրոջը խաչը բարձրացնողներին, ուստի հորդորում է աղոթքով, երկյուղածությամբ և զգոնությամբ մասնակցել արարողությանը և դուրս գալ միայն հոգևորականի վերջին օրհնությունից հետո:

75. Ինչի՞ մեջ է պահում քահանան Ս. Հաղորդությունը Պատարագից դուրս հաղորդվողներին տալու համար:

Ս. Պատարագի ընթացքում ընծայաբերված հացը և գինին Տիրոջ Մարմինն ու Արյունը դառնալուց հետո էլ միշտ մնում են սրբագործված՝ ունենա-

լով Տիրոջ իրական և ամբողջական ներկայությունը: Այս նպատակով յուրաքանչյուր հոգևորական անպայման փոքրիկ մասնատուփ ունի, որի մեջ նա պահում է Ս. Պատարագի ժամանակ սրբագործված նշխարից մասնիկներ՝ անհրաժեշտության դեպքում Ս. Հաղորդություն տալու համար: Իրանք շատ հարմար են տեղափոխության համար: Մասնատուփը պատրաստվում է արծաթից, որի կափարիչի կամ ծածկի վրա ավանդաբար պատկերված է լինում Աստծո Գառը, սկիհ կամ տերունական որևէ պատկեր: Բացի մասնատուփից, եկեղեցում Ս. Հաղորդությունը պահում են նաև սկիհի՝ Հաղորդության բաժակի մեջ, նոր մկրտվածներին կամ այլ դեպքերում Ս. Հաղորդություն տալու համար:

76. Ի՞նչ է սկիհը:

Սկիհը Ս. Պատարագի ժամանակ գործածվող այն բաժակն է, որի մեջ պատարագիչը լցնում է գինին: Այն խորհրդանշում է Քրիստոսի չարչարանքների, ինչպես նաև այն բաժակը, որից Հիսուս Ս. Հաղորդությունը բաշխեց Իր առաքյալներին: Սովորաբար սկիհի վրա պատկերվում է խաչ, Քրիստոս, Աստվածամայրը, չորս ավետարանիչները և այլն: Ընդունված է նման բաժակները պատրաստել արծաթից և միջի մասը՝ հնարավորության դեպքում՝ ոսկեջրած:

77. Ի՞նչ է մաղզման:

Մաղզման փոքր խորուխյամբ կլոր աման է, որով ծածկում են սկիհը: Դրա վրա գրվում է նշխարը՝ բաղարջ հացը: Այն նույնպես պետք է պատրաստված լինի արծաթից, իսկ միջի մասը՝ ոսկեչրած: Հաճախ մաղզմայի մեջտեղում պատկերված է լինում խաչելուծյուն կամ Աստծո Գառի նշանը: Մաղզման խորհրդանշում է Փրկչի ծննդյան մսուրը և այն գերեզմանը, որի մեջ թաղվեց Տիրոջ Մարմինը:

78. Ս. Հաղորդության խորհրդի կատարման մեջ ի՞նչ ուրիշ տարբերություններ կան մեր Եկեղեցու և մյուսների միջև:

Խտարբերություն քրիստոնեական բոլոր Եկեղեցիների՝ Հայոց Եկեղեցին Ս. Պատարագի ժամանակ օգտագործում է անապակ գինի, այսինքն՝ անխառն, մաքուր, մինչ մյուսները ջուր են ավելացնում: Դարերի ընթացքում ծիսաստվածաբանական այս խնդիրը միշտ կուվախնձոր է եղել մեր և մյուսների միջև, այն քննարկվել է եկեղեցական զանազան շփումների և աստվածաբանական երկխոսությունների ժամանակ: Յավոք, միություն հասնելու փորձերը երբեմն ձախողվել են նաև այս պատճառով, քանզի օտարները չեն հասկացել մեր Եկեղեցու դիրքորոշումը և մեզ հանիրավի մեղադրել են ուղղափառությունից շեղված լինելու մեջ:

79. Ո՞վ է հաստատել բաղարջ հացով և անապակ գինով պատարագելու այս Սրբազան Ավանդությունը:

Հայկական սկզբնաղբյուրների միաբերան վկայության համաձայն՝ անապակ գինով և բաղարջ հացով պատարագելու Հայոց Եկեղեցու Սրբազան Ավանդությունը հաստատել է մեր հավատքի հայր Ս. Գրիգոր Լուսավորիչը՝ վերցնելով Վաղ Եկեղեցու ծիսական կյանքից: Այս մասին եկեղեցական մատենագիրները սկսում են վկայել է դարի վերջից և Ը դարի սկզբից՝ հորդորելով անխախտ պահել անապակ բաժակի Սրբազան Ավանդությունը, որից շեղումն ընկալվել է իբրև հեռացում ուղղափառությունից: Այս հարցում Ս. Գրիգորը նկատի է ունեցել նաև հայերիս՝ գինի խմելու ազգային ավանդույթը, քանի որ մենք երբեք ջուր չենք խառնում գինուն և հետո խմում՝ ի տարբերություն ուրիշ ազգերի: Բնականաբար, անհասկանալի և անտրամաբանական կլիներ առօրյա կյանքում գինուն ջուր չխառնել և անապակ խմել, իսկ ծիսական կյանքում՝ խառնել: Այս հարցում ևս մեկ անգամ տեսնում ենք Ս. Գրիգորի խորագիտությունն ու մեր հոգեկերտվածքը հասկանալու նրա կարողությունը:

80. Ս. Գրիգորի կողմից այս Ավանդության հաստատման մասին ի՞նչ եկեղեցական կանոն է մեզ հասել:

Ս. Հովհան Օձնեցի կաթողիկոսի և Ասորի Եկեղեցու առաջնորդ, Անտիոքի Աթանաս պատրիարքի նախաձեռնությամբ 726 թ. Մանազկերտում գումարված հայ-ասորական եկեղեցական միացյալ ժողովի Ը կանոնում պարզորոշ ասվում է. «Ըստ Ս. Գրիգորի մեզ ավանդածի՝ պետք է անխմոր հաց և անապակ գինի հանել Ս. Մեղան և չհետևել քրիստոնյա այլ ազգերի ավանդություններին»: Ս. Հովհան Օձնեցին նաև հորդորում է նորաձև բաներ չկատարել, այլ հավատարիմ մնալ այն Սրբազան Ավանդությանը, որը մեզ է փոխանցվել հավատքի հորից: Կանոնական այս որոշումը բազմիցս մեջբերվել է մեր եկեղեցական մատենագրության մեջ՝ իբրև անապակ գինով պատարագելու հզոր կոչման:

81. Ինչպե՞ս են մյուս Եկեղեցիները հիմնավորում իրենց տեսակետը:

Ա. Կապակ կամ խառնյալ բաժակի խնդիրը սկսում է քննարկվել այն ժամանակ, երբ տարբեր եկեղեցիների գործնական ծիսական կյանքը ստանում է իր տեսական, աստվածաբանական հիմնավորումները: Այդ ժամանակ յուրաքանչյուր եկեղեցի պաշտպանում է ծիսական իր ավանդույթը՝ հիմնվելով սուրբգրային այս կամ այն տեղիի մեկնաբանության, հայրախոսական աղբյուրների, տեղական ավանդույթունների և սովորույթունների վրա: Մեր ընդդիմախոսները հիմնականում վկայակոչում են հետևյալ երկու փաստերը՝

- Հիսուս Ս. Հաղորդության խորհուրդը հաստատելիս հրեական սովորույթամբ Զատիկական ընթրիք արեց իր աշակերտների հետ, ինչը ենթադրում էր, որ Տիրոջ վերցրած բաժակը պետք է ջրախառն լիներ, քանի որ հրեաները Զատիկի տոնին գինուն անպայման ջուր էին խառնում,
- Խաչելությունից հետո Հիսուսի կողից բխեցին արյուն և ջուր (Հովհ. 19. 34), ուստի Ս. Պատարագի ժամանակ օգտագործվող գինուն պետք է ջուր խառնել:

82. Ո՞րն է Վերնատան Ավանդության ընկալման մեր Եկեղեցու տեսակետը:

Ս. Հաղորդության խորհրդի հաստատման մասին Սավեստարանական այդ հատվածն այլ կերպ է ընկալվել մեր եկեղեցում: Անապակ գինով պատարագելու Հայոց եկեղեցու Սրբազան Ավանդության բոլոր ջատագով հայրերն ու վարդապետները պնդում են, որ Ավետարանում ջրի մասին որևէ խոսք չկա, ուստի ճիշտ չէ ջուր ավելացնել գինու մեջ: Եթե դրա կարիքը լիներ, ապա ավետարանիչները կգրեին այդ մասին, ավելին՝ Հիսուս Ինքն առաջինը նման պատվեր կտար: Բայց քանի որ Տերը նման բան չի ասել, և Ավետարաններում ջրի մասին խոսք չկա, ուրեմն անհիմաստ է ջուր ավելացնել Ս. Հաղորդության բաժակի մեջ: Իսկ Ավե-

տարանից դուրս մնացած ամեն ինչ արդեն մեկնաբանության ծիրում է:

83. Ի՞նչ վկայություններ ունենք Վերնատան Ավանդության մասին մեր մատենագրության մեջ:

Միայն գինով պատարագելու մասին վկայություններ ունենք դեռևս Ե դարից: Փավստոս Բուզանդ պատմիչն ու Ս. Եղիշեն իրենց երկերում բազմիցս խոսում են գինու մասին և ջրի օգտագործման մասին որևէ հիշատակություն չունեն: Վերնատան Ավանդության մասին առաջին վկայությունը պահպանվել է Ս. Եղիշե վարդապետի մեկ գործում, որում նա նշում է, որ Վերջին ընթրիքին Հիսուս հաց և գինի վերցրեց: Մեր Եկեղեցու նշանավոր այս վարդապետն այստեղ գինու համար չի օգտագործում անապակ կամ անխառն եզրերը, որովհետև տվյալ ժամանակաշրջանում անխառն կամ խառնյալ բաժակի խնդիրը դեռևս քննարկման առարկա չէր: Բայց երբ է դարի վերջին և Ը սկզբին ծիսաստվածաբանական այս խնդիրը դառնում է քննարկման թեմա, մեր եկեղեցական հեղինակները գինու համար սկսում են արդեն օգտագործել անապակ եզրը: Հայոց եկեղեցու այս շրջանի կարկառուն դեմքերից Ստեփանոս Սյունեցին, Ս. Հովհան Օձնեցին և Խոսրովիկ Թարգմանիչն իրենց գրվածքներում հստակ խոսում են այս մասին և շեշտում, որ

Հիսուսի օգտագործած բաժակը՝ գինին, անխառն էր, անապակ: Այս ուղղափառ գիծն են պաշտպանել և նոր օրինակներով հաստատել հետագա եկեղեցական հեղինակները նույնպես՝ Անանիա վրդ. Սանահնեցին (ԺԱ դ.), Ս. Ներսես Շնորհալին, Վարդան վրդ. Այգեկցին (ԺԲ-ԺԳ դդ.), Հովհաննես վրդ. Արձիշեցին (ԺԲ-ԺԳ դդ.), Մխիթար վրդ. Սասնեցին (ԺԳ-ԺԴ դդ.), Եսայի վրդ. Նչեցին (1260-1338), Ստեփանոս արք. Օրբելյանը († 1305), Կիրակոս վրդ. Երզնկացին († 1355), Ս. Գրիգոր Տաթևացին և ուրիշներ:

84. Ինչպե՞ս է մեկնաբանվել Տիրոջ կողմից բխած ջուրը և ջուրը մեր Եկեղեցում:

Լստ Հայոց եկեղեցու դիրքորոշման՝ Տիրոջ կողմից բխած ջուրը խորհրդաբանորեն Ս. Մկրտության նշանակն է, իսկ արյունը՝ Ս. Հաղորդության: Նման մեկնաբանության հանդիպում ենք նաև Ընդհանրական եկեղեցու հայրերի մոտ: Բացի այդ, մեր եկեղեցու հայրերը վկայակոչում են մեկ այլ հիմնավոր պատճառ: Չէ՞ որ Ս. Հաղորդության խորհուրդը հաստատվել է նախքան խաչելությունը և ոչ թե խաչելությունից հետո: Ուստի ճիշտ չէ ջուր ավելացնել Ս. Հաղորդության բաժակի մեջ:

85. Ընդհանրական Եկեղեցու ո՞ր հայրերն են ավետարանական այս հաստիքը մեզ նման մեկնաբանում:

Ս. Եփրեմ Ասորին (306-373), Ս. Գրիգոր Նյուսացին (335-394), Ս. Հովհան Ոսկեբերանը և ուրիշներ նշում են, որ ավետարանական այս հաստիքում ջուրը Ս. Մկրտության խորհուրդն է, իսկ արյունը՝ Ս. Հաղորդության: Սա ցույց է տալիս, որ խորհրդաբանական այս ընկալումը մեզ է փոխանցվել Ընդհանրական Եկեղեցուց:

86. Խնդրի վերաբերյալ ի՞նչ վկայություններ ունենք մեր մատենագրության մեջ:

Այ եկեղեցական մատենագրությունը լի է Հայոց Եկեղեցու տեսակետը պաշտպանող բազմաթիվ վկայություններով: Այս մասին հստակ խոստում են Փավստոս Բուզանդն ու Ս. Եղիշեն: Ե դարից սկսած՝ խնդրին անդրադարձած բոլոր վարդապետներն ու հայրապետները պաշտպանում են նույն տեսակետը: Այս հարցում Հայոց Եկեղեցու աստվածաբանական ըմբռնումներն ու պատկերացումներն արտացոլված են նաև կիրառական արվեստում և որոշ պատկերներում, որոնցում ջուրը թափվում է Ս. Մկրտության Ավազանի մեջ, իսկ արյունը՝ Հաղորդության բաժակի կամ երեխայի բերանի:

87. Ի՞նչ աստվածաբանական հիմնավորում ունի անապակ գինի օգտագործելը:

Ս. Պատարագի ժամանակ ջրախառնության մերժումն ունի նաև իր աստվածաբանական հիմնավորումները, որոնք բխում են վարդապետական որոշ հարցերի շուրջ Հայոց Եկեղեցու տեսակետից: Մասնավորապես խնդիրը շաղկապված է Տիրոջ մարմնի անապականության ուսմունքի հետ: Մեր Եկեղեցու աստվածաբանական մտածողության համաձայն՝ եթե բաղաբլ հացը Տիրոջ անապական Մարմնի խորհուրդն ունի, ապա նաև գինին՝ Տիրոջ Արյունը, պետք է անապակ, անխառն լինի, քանզի միայն այդ դեպքում կատարյալ և ամբողջական կլինի փրկագործությունը: Հայերիս համար անհասկանալի է ջրախառնությունը, քանզի այն արդեն ոչ թե Տիրոջ Արյունը կլինի, այլ խառնածին մի բան, որով վտանգվում է հենց փրկագործությունը: Ս. Հաղորդության բաժակի մեջ ջրի հավելումն ընկալվել է իբրև ապականության նշան, որն էլ մերժվել է մեր Եկեղեցու հայրերի և վարդապետների կողմից: Վերջիններս ջրախառնության մեջ տեսել են նաև նեստորականության և երկաբնակության մեջ ընկնելու վտանգ, ուստի հորդորել են անխախտ պահել Ս. Գրիգորից մեզ ավանդված Սրբազան Ավանդությունը:

88. Ինչո՞ւ ենք Ս. Պատարագի ժամանակ բաղարջ հաց օգտագործում:

Հայոց և Հռոմեական Կաթոլիկ եկեղեցիները Ս. Պատարագի ժամանակ օգտագործում են բաղարջ հաց, մինչ մյուսները՝ խմորյալ: Հիսուս առաքյալների հետ ավանդական հրեական Զատիկական ընթրիք արեց և օգտագործեց բաղարջ հաց, քանի որ հրեաները Զատիկին բաղարջ էին ուտում: Այս մասին շատ հստակ վկայում է Ս. Գիրքը. «Յոթը օր բաղարջ հաց կուտեք, առաջին իսկ օրից սկսած ձեր տնից կվերացնեք թթխմորը: Բոլոր նրանք, ովքեր առաջին իսկ օրից մինչև յոթներորդ օրը թթխմորով հաց կուտեն, կվերացվեն խրայելացիների միջից» (Ելք 12. 15, Բ Օր. 16. 3-4):

89. Որո՞նք են բաղարջ հացի նախատիպերը Հին Ուխտում:

Մեր եկեղեցու վարդապետները և հայրերն իրենց հոգեշահ երկերում Հին Կտակարանից վկայակոչում են մի շարք հատվածներ, որոնք Ս. Հաղորդության խորհրդում գործածվող բաղարջ հացի նախորինակներն են: Դրանք են՝

➤ Աբրահամ նահապետը բաղարջ հացով է կերակրում Աստծուն (տե՛ս Ծննդ. 18. 6): Ըստ Ս. Ներսես Շնորհալու՝ Աբրահամի սեղանը Վերնատան սեղանի նախօրինակն է: Ինչպես այստեղ Աստված անմարմնաբար ճաշակեց Աբրահամի սեղանից,

այնպես էլ Վերջին ընթրքին, Իր Մարմինը բաշխեց աշակերտներին՝ Աբրահամի զավակներին,

- Դովտը հրեշտակների համար ընթրիք պատրաստեց, բաղարջ հաց եփեց և նրանց հյուրասիրեց (տե՛ս Ծննդ. 19. 3),
- Մովսեսը պատվիրեց իսրայելիացիներին յոթ օր բաղարջ ուտել (Ելք 12. 15): Բաղարջը խորհրդանշում է Ս. Հաղորդության խորհուրդը, իսկ յոթ օրերը՝ այս կյանքի յոթ ժամանակաշրջանները,
- Աստված Մովսեսին պատվիրեց Քավության սեղանին դնել առաջավորության հացը, որը նույնպես բաղարջ էր (տե՛ս Ելք 25. 30, հմմտ. Ղևտ. 24. 5-9, Ա. Թագ. 21. 4):

90. Այդ դեպքում ինչպե՞ս են բացատրում իրենց տեսակետը մյուս եկեղեցիները, որոնք խմորյալ հաց են օգտագործում:

Հացի տեսակի շուրջ առաջացած թնշուկի պատճառներից հիմնականը նոր Կտակարանի ժամանակագրությանն է, ավելի ճիշտ՝ հետևյալ հարցի պատասխանը, թե ո՞ր օրը Հիսուս Իր աշակերտների հետ ընթրիք արեց և հաստատեց Ս. Հաղորդության խորհուրդը: Ըստ Համատես Ավետարանների՝ Զատիկական ընթրիքը տեղի է ունեցել Նիսան (ապրիլ) ամսվա 14-ի երեկոյան՝ հինգշաբթի օրը, այսինքն՝ հաջորդ օրը՝ ուրբաթ, լինում է Զատիկի առաջին օրը: Իսկ Հովհաննե-

սի Ավետարանի տեղեկությունների համաձայն՝ Նիսանի 14-ն ուրբաթ էր, այսինքն՝ Զատիկը շաբաթ օրն էր՝ Նիսանի 15-ին: Սրանից հետևում է, որ Հիսուս Վերջին ընթրիքն արել է հինգշաբթի երեկոյան, Նիսանի 13-ին, երբ սկսվում էր Նիսանի 14-ը՝ ուրբաթ օրը: Ավետարանների հաղորդած այս տեղեկությունները ցայսօր էլ քննարկվում են Ս. Գրքի մեկնիչների և ուսումնասիրողների կողմից, երկու տեսակետներն էլ ունեն իրենց պաշտպաններն ու ընդդիմախոսները: Հայոց եկեղեցին դարեր ի վեր Ս. Պատարագի խորհուրդը կատարում է բաղարջ հացով և հիմնվում համատես Ավետարանների վրա՝ պնդելով, որ Հիսուս առաքյալների հետ Նիսանի 14-ին, հինգշաբթի օրը, Զատկական ընթրիք արեց և օգտագործեց բաղարջ հաց: Մինչդեռ խմորչալ հաց օգտագործող եկեղեցիներն այն կարծիքին են, որ Վերջին ընթրիքը Բաղարջակերաց տոնից մեկ օր առաջ էր, ուստի Հիսուս խմորչալ հաց է օգտագործել: Վերջիններս նաև հավելում են, որ Նոր Կտակարանի այդ հատվածում հացի համար գործածվում է հունարեն *άρτος* (*artos*) բառը, մինչդեռ բաղարջ հացի դեպքում պետք է լիներ՝ *ἄζυμος* (*azymos*):

91. Ի՞նչ է խորհրդանշում բաղարջ հացը:

Բաղարջ կամ անթթխմոր հացը Քրիստոսի անապական մարմնի խորհուրդն ունի: Ըստ մեր

եկեղեցու վարդապետների և հայրերի՝ թթխմորը «օտար» նյութ է, փոփոխական, որը կարող է փշանալ կամ նպաստել հացի բորբոսմանը, որով էլ այն դառնում է ապականության տարր: Հետևաբար՝ այն չի կարող խառնվել հացին, քանզի մեր աստվածաբանական մտածողության համաձայն՝ բաղարջը Քրիստոսի մարմնի անապականությունն է ցույց տալիս, առանց որի չի կարող լինել փրկագործությունը: Բացի սրանից, հայ վարդապետները նաև պատճառաբանում են, որ անթթխմոր հացը բնական է, իսկ թթխմորովն այլափոխում է հացի այդ բնականությունը: Ըստ ժԱ դարի եկեղեցական գործիչ Անանիա վրդ. Սանահնեցու՝ թթխմորով հացը չի կարող նաև մեղքերի թողություն պարգևել, քանի որ այն խառնված է ապականացու տարրերի հետ: Իսկ ապականացուն ոչ մի դեպքում չի կարող Քրիստոսի Մարմինը լինել, քանզի Տիրոջ Մարմինն անապական է:

92. Ի՞նչ է խորհրդանշում խմորը Նոր Ուխտում:

Խմորը Նոր Կտակարանում խորհրդանշում է ապականությունը, մեղքը, շարությունը, անզգամությունը և այլն: Հիսուս Ավետարանում ասում է. «Ինչպե՞ն չեք հասկանում, որ հացի համար ձեզ չասացի՞ զգուշացնե՞ք փարիսեցիների և սադուկեցիների խմորից» (Մատթ. 16. 11), իսկ Պողոս առաքյալը հորդո-

րում է. «Մաքրեցե՛ք, դեն նետեցե՛ք հին խմորը, որպեսզի նոր զանգված լինեք առանց թթխմորի, քանզի Քրիստոս՝ մեր Զատիկը մորթվեց: Ուրեմն, տոն կատարենք ոչ թե հին խմորով, այլ անկեղծության և ճշմարտության անթթխմոր հացով» (Ա. Կորնթ. 5. 7-8): Այս տեսանկյունից միայն բաղարջ, անապական հացը կատաշաճեր Տիրոջը: Հանրագումարի բերելով խնդրի շուրջ բոլոր կարծիքները՝ Ս. Գրիգոր Տաթևացին եզրակացնում է. «Մա է իրական պատճառը. ովքեր կամենում են Քրիստոսի մարմինն ապականացու ասել, խմոր և ջուր են խառնում, թեպետ ուրիշ պատճառներ էլ են բերում: Իսկ մենք՝ ուղղափառներս, խոստովանում ենք Քրիստոսի կուսածին մարմինն առանց ապականության, ուստի անխմոր հացով և անապական բաժակով ենք կատարում Նրա Մարմնի և Արյան խորհուրդը»:

93. Ավետարանական ի՞նչ այլ հիմնավորում են բերում մյուսները հոգուտ թթխմորի:

Ուղղափառ եկեղեցու շրջանակում ստեղծված հակաճառական գրականության մեջ խնդրի վերաբերյալ հաճախ վկայակոչվում է նաև հետևյալ սուրբգրային համարը. «Երկնքի արքայությունը նման է թթխմորի, որ մի կին վերցնելով, դրեց երեք չափ այլուրի մեջ, մինչև ամբողջը խմորվեց» (Մատթ. 13. 33): Նրանք պնդում են, որ այստեղ հիշատակվող թթխմորը

հենց Ս. Պատարագի ժամանակ գործածվող հացի տեսակն է:

94. Ինչպե՞ս է վերոգրյալ ավետարանական հատվածը մեկնաբանվել մեր Եկեղեցում:

Այ մեկնաբանական գրականության մեջ ավետարանական այս առակը տարբեր կերպ է ընկալվել: Չնայած հայ որոշ մեկնիչներ նույնպես այստեղ խոսում են Ս. Հաղորդության խորհրդի հացի մասին, սակայն նրանք երբեք չեն մանրամասնում հացի տեսակը: Իբրև Ս. Գրիգոր Լուսավորչի զավակների՝ նրանց համար հստակ է և անքննարկելի, որ Ս. Հաղորդության հացը պետք է բաղարջ լինի: Հայոց եկեղեցու վարդապետների և հայրերի գրվածքներում սուրբգրային այս համարը հիմնականում մեկնաբանվում է՝ իբրև օրինակ ամբողջ աշխարհում Ավետարանի քարոզության և տարածման:

Թթխմորը մի նյութ է, որը դրվում է ալյուրի մեջ և այն խմորուն դարձնում՝ իրեն ձգելով ամեն ինչ: Ինչպես թթխմորն է ամբողջ զանգվածն իրեն քաշում, նույն ձևով էլ Ավետարանը՝ Քրիստոսի մասին բարի լուրը, շատերի սիրտը դարձրեց դեպի Փրկիչը: Խմորի այս հատկության նման առաքյալները խառնվեցին հեթանոսների հետ և հաղթեցին՝ իրենց ձգեցին նրանց:

Թթխմորը նաև տարածվելու հատկություն ունի, սրա նմանողություններ պիտի տարածվի նաև Ս. Ավետարանն աշխարհի շորս կողմերում (տե՛ս Մատթ. 24. 14): Հիսուս երկնքի արքայությունը նմանեցրեց թթխմորի, քանզի ինչպես այն ալյուրին է կյանք տալիս, դարձնում գործածելի, նույն օրինակով Աստծո արքայությունը՝ Հիսուս, կյանք է տալիս հոգեպես մեռածներին՝ խմորվելով նրանց դարձնում նոր զանգված, այսինքն՝ Քրիստոսի խորհրդական մարմինը՝ Եկեղեցին: Եվ յուրաքանչյուր քրիստոնյա, Տիրոջ Մարմինն ու Արյունը ճաշակելով, կազմում է հենց Եկեղեցին: Ստեփանոս Այլունեցին «Չորս Ավետարանների համառոտ մեկնություն» մեջ «Թթխմորը» համեմատում է Քրիստոսի վարդապետության հետ, իսկ «կնոջը»՝ մարդու հոգու, որի երեք մասերն են՝ բանականը, սրտմտականը և ցանկականը: Սրանք էլ իրենց հերթին խորհրդանշում են անցյալը, ներկան և ապագան: Ըստ նրա՝ ով իր մեջ կպահի Քրիստոսի վարդապետությունը, ամբողջովին կլուսավորվի:

95. Ե՞րբ է մեր պատմության մեջ առաջին անգամ արծարծվում բաղարջ հացի և անապակի բաժակի մասին խնդիրը:

Օրիսաստվածաբանական այս խնդիրը Հայոց և Բյուզանդական Եկեղեցիների միջև քննարկման նյութ է դառնում 2 դարի վերջում: Այս մասին մեզ հասած վաղագույն վկայությունը պահպան-

վել է հունարեն թարգմանություններ հայ քաղկեդոնական միջավայրում ստեղծված «Պատմություն հայոց հարցի մասին» երկում, որում մեջբերվում է Մովսես Բեղիվարդեցի կաթողիկոսի (574-604) հայտնի արտահայտությունը: Վերջինս 591 թ. մերժում է Կ. Պոլիս գնալու Մորիկ կայսեր առաջարկը՝ պատճառաբանելով. «Ես չեմ անցնի Ազատ գետը, չեմ ուտի փռան հացը և չեմ խմի ջրախառն տաք գինին»: Ուսումնասիրողների կարծիքով՝ Մովսես կաթողիկոսի կտրուկ պատասխանի պատճառը հենց ջրի ավելացումն ու խմորյալ հացի օգտագործումն էին քաղկեդոնականների կողմից, որը հակառակ էր մեր ծիսական ավանդույթին: Այստեղից կարելի է նաև եզրակացնել, որ հայերս դրանից առաջ արդեն իսկ գործածում էինք բաղարջ հաց և անխառն գինի:

96. Ե՞րբ է բաղարջի խնդիրը քննարկվում հույների և լատինների միջև:

Խնդրի շուրջ վիճաբանությունները սկսվում են ԺԱ դարում, երբ 1054 թ. հուլիսի 16-ին պապական նվիրակները կարդինալ Հյուսթերտի († 1061) գլխավորությամբ մտնում են Ս. Սոֆիայի տաճար և Ս. Սեղանին դնում պապի կոնդակը, որով Կ. Պոլսի Միքայել Ա Կերուլարիոս (1043-1058) պատրիարքը և նրա հետևորդները զրկվում են եկեղեցական հաղորդությունից: Այնուհետև երկու կողմերը նգո-

վում են իրար: Փաստորեն 451 թ. հետո՝ 1054 թ., Ընդհանրական եկեղեցին դոգմատիկ, կանոնական և ծիսական տարաձայնությունների պատճառով բաժանվում է երկրորդ անգամ. Արևմուտքում գործում է Հռոմեական Կաթոլիկ եկեղեցին՝ Հռոմ կենտրոնով, իսկ Արևելքում՝ Ուղղափառ եկեղեցին՝ Կ. Պոլսով: Եկեղեցու այս բաժանումը ցայսօր էլ հաղթահարված չէ, չնայած 1964 թ. Պողոս Զ պապը (1897-1978) և Կ. Պոլսի Աթենագորաս պատրիարքը (1886-1972) երուսաղեմում միմյանց վրայից հանեցին նգովքները, բայց Ս. Հաղորդությունն իրար տալու հարցը մնում է չլուծված

97. Ինչո՞ւ կաթոլիկները Ս. Հաղորդություն չեն տալիս մանուկներին:

Մրանք պնդում են, որ դեռ գիտակցություն չունեցող մանուկների դեպքում անհրաժեշտություն չկա Ս. Հաղորդություն տալու, քանզի այդպիսիներն արդեն իսկ ապրում են Աստծո շնորհի ներքո: Ս. Հաղորդությունը մեր հոգու սնունդն է, առանց որի չի կարող ապրել քրիստոնյան: Իրա կարիքն ունեն բոլորը՝ մանուկից մինչև ծեր: Հետևաբար՝ անիմաստ է զրկել մանուկներին Ս. Հաղորդությունից, քանզի որևէ լուրջ պատճառ չկա: Եթե ընդունում ենք մանկամկրտությունը, ապա նույն ձևով պետք է ընդունենք նաև նրանց Ս. Հաղորդություն տալը: Հիսուս Իր Մարմինն ու Արյունը

նր ճաշակելու համար տարիքային սահմանափակում չսահմանեց, ընդհակառակը՝ հորդորեց նմանվել հենց մանուկներին. «Թո՛ւյլ տվեք մանուկներին և մի՛ արգելեք, որ նրանք Ինձ մոտ գան, քանզի այդպիսիներին է երկնքի արքայությունը» (Մատթ. 19. 14):

98. Ինչո՞ւ է Կաթոլիկ եկեղեցին հավատացյալներին միայն մեկ տեսակով հաղորդում:

Գարեբի ընթացքում կատին և Ուղղափառ եկեղեցիների միջև մշտապես վեճի առարկա է եղել հավատացյալներին մեկ կամ երկու տեսակով Ս. Հաղորդություն բաշխելու խնդիրը: Եթե Կաթոլիկ եկեղեցին հավատացյալներին հաղորդում է միայն հացով, և գինին վերապահում է հոգևորականներին, ապա Ուղղափառ եկեղեցիներում, որոնց թվում նաև Հայոց եկեղեցում, հավատացյալները հաղորդվում են միասնաբար՝ հացով և գինով:

Վաղ եկեղեցու գործնական ծիսական կյանքում տարածված էր երկու տեսակով Ս. Հաղորդություն տալը: Բայց օրինակ՝ հիվանդներին, բանտարկյալներին և եկեղեցուց հեռու գտնվողներին Ս. Հաղորդություն էր տրվում միայն հացով: Ս. Բարսեղ Կեսարացին խոստում է անապատի ճգնավորների մասին, որոնք հաղորդվում էին միայն հացով, քանզի նման տեղերում դժվար էր գինի պահելը: Սա նշանակում է, որ դեռևս

առաքելական շրջանից Ընդհանրական Եկեղեցում կենցաղավարել են հաղորդվելու երկու ձևերն էլ: Սակայն ժամանակի ընթացքում Արևմուտքում արմատավորվում է մեկ տեսակով հաղորդվելու ավանդույթը:

Կաթոլիկներն իրենց դիրքորոշումը բացատրում են նաև մի շարք պատճառներով, օր.՝ գուցե պատահամբ գինին՝ Տիրոջ Արյունը, գետնին թափվի, որոշ մարդկանց հակացուցված է գինի օգտագործելը, գինու պակասությունը և այլն: Ծիսական այս ավանդույթի աստվածաբանական հիմնավորումն այն է, որ Հիսուս իր ամբողջականությունը ներկա է ամեն մի ձևի մեջ, հետևաբար տարբերություն չկա, թե ինչ տեսակով կհաղորդվես: 1562 թ. Տրիդենտյան ժողովը հատուկ որոշումով սահմանեց, որ մեկ տեսակով հաղորդվելը բավարար է փրկության համար և նզովեց բոլոր նրանց, ովքեր չէին ընդունում հաղորդվելու լատինական ծեսը: Խնդիրն արձարծվել է նաև 1962-1965 թթ. Վատիկանի Բ ժողովում (Բ գլուխ, կանոն 55), որը չնայած վերահաստատեց այս հարցում Տրիդենտյան ժողովում ընդունված տեսակետը, բայց որոշ դեպքերում եպիսկոպոսի թույլտվությամբ արտոնեց նաև երկու տեսակով հաղորդվելը:

Մեր Եկեղեցին այս հարցում հավատարիմ է մնացել ծիսական նախնական ավանդույթին և իր հավատացյալներին հաղորդում է սրբագործված հացով և գինով, քանզի շատ հստակ ունենք Տիրոջ պատվերը. «Խմնեցե՛ք դրանից բոլորդ» (Մատթ. 26. 28), «Եթե չու-

տեք Մարդու Որդու Մարմինը և ջրմպեք Նրա Արյունը, ձեր մեջ կյանք չեք ունենա» (Հովհ. 6. 54): Հիսուսի խոսքերում չկա որևէ խտրականություն, ուստի անհասկանալի է այս հարցում կաթոլիկների տեսակետը:

99. Ինչո՞ւ է մեր Եկեղեցում պատարագի քահանան օրհնում մեկ նշխար:

Այոց Եկեղեցու ավանդության համաձայն՝ Ս. Պատարագի ընթացքում օգտագործվում է մեկ նշխար, մինչ մյուսները՝ մեկից ավելի: Մեր Եկեղեցու վարդապետները նշում են, որ Քրիստոս մեկ հաց վերցրեց, օրհնեց և տվեց Իր աշակերտներին՝ ասելով. «Սա՛ է Իմ Մարմինը» (Մատթ. 26. 26): Պողոս առաքյալն էլ ասում է. «Մի հաց, մի մարմին ենք բոլորս, քանի որ բոլորս էլ այդ միակ հացից ենք վայելում» (Ա. Կորնթ. 10. 17): Հետաքրքրական է, որ անցյալից մեզ հասած սկիզբներից շատերը մեծ բերան ունեն, այսինքն՝ հնում պատրաստել են ավելի մեծ նշխար, որպեսզի այն բավարարեր բոլոր ցանկացողներին:

Մեկ նշխար օգտագործելու ընդդիմախոսները երբեմն նաև հետևյալ պատճառաբանություն են մեջբերում. ինչպես քահանան կարող է մի քանի հոգու մկրտել, նույն ձևով էլ կարող է մի քանի հաց օրհնել: Ի պատասխան սրան՝ մերոնք էլ նշում են, որ Քրիստոսի կողմից մկրտելու պատվերը հոգնակի էր, իսկ այս դեպքում՝ եզակի (տես Մատթ. 26. 28, Դուկ. 22. 19):

100. Հայոց Եկեղեցու անդամը կարո՞ղ է հաղորդվել այլ Եկեղեցում:

Մեր Եկեղեցու անդամը կարող է հաղորդվել միայն Դավանակից Եկեղեցիներում՝ Ղպտի, Ասորի, Եթովպիայի և Հնդիկ Մալանկարա Ուղղափառ Եկեղեցիներում, որոնք մեզ նման չեն ընդունում Քաղկեդոնի ժողովը՝ հավատարիմ մնալով առաջին երեք՝ 325 թ. Նիկիայի Ա, 381 թ. Կ. Պոլսի Բ և 431 թ. Եփեսոսի Գ Տիեզերաժողովների որոշումներին և սահմանումներին: Երբ մարդ հաղորդվում է որևէ Եկեղեցում, նա դրանով շեշտում է նաև իր այս կամ այն Եկեղեցուն և եկեղեցական ընտանիքին պատկանելը:



ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ալեքսեյան Նարեկ վրդ.**, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատասխանները ոչ ուղղափառ առարկություններին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1999
2. **Ալեքսեյան Նարեկ արք.**, Քրիստոնեական աստուածպաշտությունը և Հայ Առաքելական Եկեղեցույ Սուրբ Պատարագը, Պիքֆայա-Լիբանան, 2012
3. **Աղանեանց Գիտ Ա. քահանայ.** Կարգ աստուածպաշտության Հայաստանեայց Ս. Եկեղեցույ, Թեհրան, 2010
4. Աստուածպաշտություն Հայաստանեայց Ուղղափառ Եկեղեցույ, Մասն առաջին, աշխատություն Ստեփանոս ավագ քահանայի Մանդինեանց, Վաղարշապատ, 1872
5. **Բաղդասարյան Է. Մ.**, Հովհաննես Երզնկացին եւ նրա իրատական արձակը, Երևան, 1977
6. **Բաղումյան Զաքարիա վարդապետ.** Անապակ բաժակի խնդիրը Հայոց Եկեղեցում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2013
7. **Բարթիկյան Հրաչ.** Narratio de rebus Armeniae, հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր, «Բանբեր մատենադարանի», Հ^տ 6, Երևան, 1962
8. **Բարխուտարեանց Մակար եպիսկ.**, Քրիստոնեական վարդապետություն Հայաստանեայց Առաքելական և Սուրբ Եկեղեցույ, Տփլիս, 1895
9. **Գաթրոնեան Հ. Յ.**, Հիմնական տարբերություն կաթոլիկե և էջմիածնական դաւանութեանց, Կոստանդինուպոլիս, 1864
10. **Գալուստեան Շնորհք եպիսկոպոս.** Տեղիք աստուածաբանութեան, Երուսաղէմ, 1993

11. Գեորգեայ վարդապետի ասացեալ վասն Հաղորդութեան, Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. Հ^օ 941 (1689 թ.), 944 (1431 թ.)
12. Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ, Կ. Պօլիս, 1807
13. **Գրիգոր Տաթևացի**, Ամառան հատոր, Երուսաղէմ, 1998
14. **Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, Երուսաղէմ, 1993
15. **Գրիգոր Տաթևացի**, Ձմեռան հատոր, Երուսաղէմ, 1998
16. **Դերենիկ եպիսկոպոս**, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցոյ խորհուրդները, Պէյրուս, 1957
17. **Զեքիեան Լևոն Հ.**, Յովհան Մանդակունիի տեսութիւնը Սուրբ Հաղորդութեան մերձեցումի մասին, «Բազմավեպ», 1974
18. Թուղթ ընդհանրական՝ արարեալ երիցս երանեալ սուրբ Հայրապետին մերոյ Տեառն Ներսիսի Շնորհալոյ, Ս. Էջմիածին, 1865
19. **Իգնատիոսյան Վաչե ծ. վրդ.**, Մեր Ս. Պատարագը, Երևան, 1999
20. **Խոսրով Անձևացի**, Սուրբ Պատարագի մեկնություն, Ս. Էջմիածին, 2001
21. Խորհրդատետր Սրբոյ Պատարագի ըստ ծիսի Առաքելական Սուրբ Եկեղեցոյ Հայաստանեայց, Վաղարշապատ, 1880
22. Կանոնագիրք հայոց, Ա, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբչանի, Երևան, 1964, հ. Բ, Երևան, 1971
23. **Կիսրեղ Երուսաղէմացի**, Կոչումն ընծայութեան, Կ. Պօլիս, 1727
24. Հայ Եկեղեցու յոթ խորհուրդները, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2003
25. Հանդիսարան ուղղափառութեան Հայոց Եկեղեցոյ, յօրինեաց Տէր Մատթէոս արքեպիսկոպոս նախորդ պատրիարք Կոստանդնուպօլսոյ, Կօստանդնուպօլիս, 1854
26. Հրահանգ քրիստոնէական հաւատոյ ըստ ուղղափառ դասանութեան Եկեղեցոյ Հայաստանեայց, աշխատասիրութեամբ Մսերայ Մագիստրոսի, Մոսքուա, 1861
27. **Ղազար Զահկեցի**, Աստուածաբանական դրախտ ցանկալի, Երուսաղէմ, 2002
28. Ճաշոց գիրք Հայաստանեայց Եկեղեցոյ, Վաղարշապատ, 1872
29. **Մայիլեան, Ս. Ս.**, Ոսկեփորիկ, Մասն Բ, Երևան, 1993
30. Մեկնութիւն ահաւոր խորհրդոյ Սրբոյ Պատարագին, արտահանեալ ի մեկնութեանց Խոսրովու Անձևացեաց եպիսկոպոսի և Ներսիսի Լամբրօնացոյ վերատեսչին Տարսօնի, կարճելով և պարզաբանելով ի Յօհաննու Արճիշեցոյ, Կոստանդնուպօլիս, 1799
31. **Չէպէյեան Ղևոնդ արքեպիսկոպոս**, Հայ Եկեղեցոյ եօթը խորհուրդները (կանոնագիտական նկատումներ), Անթիլիաս, 1988
32. Ս. Պատարագի օրերն, տեսակք եւ ժամեր Հայ Եկեղեցոյ մէջ ի Հ. Վարդանայ Հացունոյ, Վենետիկ, 1899
33. **Ստամբոլցյան Ս.**, Մեղայ Աստուծոյ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2001
34. Սրբազան Պատարագ Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցոյ, Երևան, 2010:
35. Սրբազան Պատարագամտոյցք Հայոց, Թարգմանութիւնք պատարագաց Յունաց, Ասորոց և Լատինացոց հանդերձ քննութեամբք, նախագիտելեօք և ծանօթութեամբք ի Հ. Յովսէփայ Վ. Գաթրճեան, հրատարակեալ հանդերձ յաւելումովք ի Հ. Յակովբոսէ Վ. Տաշեան, Վիեննա, 1897
36. Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի վարդապետի մատենագրութիւնք, Վենետիկ, 1859
37. Սրբոյն Ներսէսի Լամբրոնացոյ Տարսոնի եպիսկոպոսի խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցոյ և մեկնութիւն խորհրդոյ պատարագին, Վենետիկ, 1847
38. Տեառն Յովհաննու Մանդակունոյ Հայոց Հայրապետի ճառք, Վենետիկ, 1860
39. **Տէր Միքէլեան Արշակ**, Հայաստանեայց Սուրբ Եկեղեցու Բրիստոնէականը, Երուսաղէմ, 1993

40. Փաստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց ի չորս դարութիւնս, Վենետիկ, 1832
41. **Փէրտահճեան Երուանդ վրդ.**, Հաղորդութեան խորհուրդը, Ստանպուլ, 2012
42. Քանի շնչում եմ, հույս ունեմ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2006
43. Քրիստոնեական, Երևան, 1994
44. Քրիստոնեական Կաթողիկէ Եկեղեցոյ, Վատիկանի հրատարակչատուն, 1997
45. «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002
46. **Օրմանյան Մաղաքիա արք.**, Ծիսական բառարան, Երևան, 1992
47. Закон Божий, Москва, 1998
48. Историческое, Догматическое и Таинственное изъяснение Божественной Литургии, составлено Иваном Дмитриевским, Москва, 1993
49. Катехизис Католической Церкви, Москва, 2001
50. **Киприан (Керн) Архимандрит**, Евхаристия, Москва, 1999
51. **Московский Патриархат**, Концепция участия Русской Православной Церкви в борьбе с распространением ВИЧ/СПИДа и работе с людьми, живущими с ВИЧ/СПИДом, Москва, 2005
52. Православная энциклопедия, Том XVII, Москва, 2008
53. Православно-догматическое богословие, Макария Митрополита Московскаго Коломенскаго, т. II, С.-Петербург, 1883
54. Catechism of the Catholic Church, United States of America, 1994
55. The Oxford Dictionary of Byzantium, New York, Oxford, Oxford University Press, 1991

ՀԱՐՑԱՇԱՐ

1. Ինչ է Ս. Յաղորդությունը:
2. Ինչ ենք հասկանում «հաղորդվել» ասելով:
3. Ինչ է խորհրդանշում Ս. Յաղորդությունը:
4. Ինչ է ասում Ս. Պողոս առաքյալն այս միության մասին:
5. Ինչն է Ս. Յաղորդության խորհուրդը կոչվում «Անարյուն Պատարագ»:
6. Ինչպե՞ս ենք այլ կերպ անվանում այս խորհուրդը:
7. Ինչ այլ անուններ է հավելում Ս. Գրիգոր Տաթևացին (1346-1409):
8. Ո՞վ է հաստատել Ս. Յաղորդության խորհուրդը:
9. Ինչն է Յովհաննեսի Ավետարանը չի անդրադառնում Ս. Յաղորդության խորհրդի հաստատման պատմությանը:
10. Ինչ է ասում Քրիստոս Ս. Յաղորդության մասին:
11. Ինչ է պատմում Ս. Պողոս առաքյալը Ս. Յաղորդության խորհրդի հաստատման մասին:
12. Որո՞նք են Ս. Յաղորդության նախատիպերը Յին Ուխտում:
13. Ո՞վ կարող է Ս. Պատարագ մատուցել և Ս. Յաղորդություն տալ:
14. Ինչ է անհրաժեշտ Ս. Յաղորդություն ստանալու համար:

15. Զանի որ մկրտված չեմ, բնականաբար, չեմ կարող հաղորդվել, բայց արդյո՞ք կարող եմ ներկա լինել Ս. Պատարագին:
16. Ո՞րն է Ս. Հաղորդության խորհրդի ձևը:
17. Ո՞րն է Ս. Հաղորդության նյութը:
18. Ի՞նչ գույնի գինի են օգտագործում Ս. Պատարագի ժամանակ:
19. Ինչպե՞ս են հացը և գինին դառնում Զրիստոսի Մարմինն ու Արյունը:
20. Ինչպե՞ս է մեկնաբանում փոխարկման պահը Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցին:
21. Ուրեմս, Ս. Սեղանի վրա սրբագործված հացը և գինին սովորական հաց և գինի չեն:
22. Ուզում ե՞ք ասել, որ ուղղափառ հավատքի խոստովանությունն անհրաժեշտ պայման է Ս. Հաղորդություն ստանալու համար:
23. Ի՞նչ է ասում Ս. Հովհան Մանդակունին (478-490) սրբագործված հացի և գինու՝ Տիրոջ իրական Մարմինը և Արյունը լինելու մասին:
24. Ի՞նչ այլ վկայություններ ունենք այս մասին Եկեղեցու հայրերից և հայ մատենագրության մեջ:
25. Ո՞ր պահին են հացը և գինին դառնում Զրիստոսի իրական Մարմինն ու Արյունը:
26. Ինչպե՞ս է մեկնաբանում այս հատվածը Խոսրով եպս. Անձևացին (Ժ դ.):

27. Ո՞րն է այս հարցում Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու տեսակետը:
28. Ինչո՞ւ Հիսուս Զրիստոս Ս. Հաղորդության համար հաց և գինի ընտրեց:
29. Ո՞րն է Ս. Հաղորդության արդյունքը մարդու կյանքում:
30. Ի՞նչ հաճախականությամբ պետք է հաղորդվել:
31. Ինչպիսի՞ն էր այս հարցում Վաղ Եկեղեցու կեցվածքը:
32. Ի՞նչ հաճախականությամբ պետք է այսօր հաղորդվել:
33. Այդ դեպքում ինչո՞ւ են հոգևորականները հաճախ նշում, որ տարվա ընթացքում պետք է հաղորդվել հինգ տաղավար տոներին:
34. Ի՞նչ է ասում Ս. Հովհան Մանդակունին հաղորդվելու քանակի մասին:
35. Ինչպե՞ս պետք է պատրաստվել Ս. Հաղորդությանը:
36. Ըստ Ս. Գրիգոր Տաթևացու՝ որո՞նք են Ս. Հաղորդությանն արժանի լինելու երեք նախապայմանները:
37. Ի՞նչ է ասում Ս. Պողոս առաքյալն անարժանորեն հաղորդվելու մասին:
38. Ի՞նչ անեմ, երբ ինձ անարժան եմ համարում Ս. Հաղորդություն ստանալու համար:

39. Ի՞նչ է ասում Գևորգ վրդ. Սկևռացին արժանաբար հաղորդվելու մասին:
40. Հնարավոր է մինչև վերջ հաղթահարել Ս. Հաղորդությանը մոտենալու մեր միջի երկվությունը:
41. Չնայած Հայոց Եկեղեցու զավակ եմ և ինձ հավատացյալ եմ համարում, բայց եկեղեցի շատ հազվադեպ եմ գնում: Ցավոք չեմ հիշում, թե վերջին անգամ է՞րբ եմ հաղորդվել:
42. Հաճախ կարելի է լսել նման արդարացում՝ մոռացել և մեկ գավաթ սուրճ խմել, կարող եմ հաղորդվել:
43. Կարող եմ նույն օրը մի քանի անգամ հաղորդվել տարբեր եկեղեցիներում:
44. Ինչպե՞ս պետք է պահել Ս. Հաղորդությունն ստանալու օրը:
45. Կարելի է հաղորդվել Մեծ Պահքի ընթացքում:
46. Իսկ բացառություններ չկան:
47. Արդյո՞ք դաշտանի ժամանակ կնոջը կարելի է հաղորդվել:
48. Ո՞րն պետք է խոստովանել մեղքերը:
49. Խոստովանության քանի՞ տեսակ կա մեր եկեղեցում:
50. Ո՞րն է անհատական խոստովանությունը:
51. Ի՞նչ է ընդհանրական խոստովանությունը:
52. Կարող է քահանան խոստովանությունն ուրիշի հայտնել:

53. Ո՞ր դեպքերում քահանան կարող է Ս. Հաղորդություն չտալ ցանկացողին:
54. Ս. Հաղորդությունը բոլորին տրվում է նույն բաժակից, վտանգ չկա՞ հիվանդանալու կամ վարակվելու:
55. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդներին կարելի՞ է Ս. Հաղորդություն տալ:
56. Կարող եմ հաղորդվել առանց մեղքերի խոստովանության, եթե անգամ շատ եմ ցանկանում:
57. Մինչև ի՞ր տարիքը երեխաները կարող են հաղորդվել առանց խոստովանության:
58. Հիվանդները և հղիները կարող են Ս. Հաղորդությունից առաջ ինչ-որ բան ուտել:
59. Քահանան կարող է Ս. Հաղորդություն տալ կոմայի (մահաբուն) մեջ գտնվող մարդուն:
60. Ե՞րբ է մարդ կյանքում առաջին անգամ Ս. Հաղորդություն ստանում:
61. Ի՞նչ է ասում քահանան, երբ նոր մկրտվածին առաջին Ս. Հաղորդությունն է տալիս:
62. Ս. Պատարագի ժամանակ ի՞ր պահին է բաշխվում Ս. Հաղորդությունը:
63. Ի՞նչ պետք է ասել Ս. Հաղորդություն ստանալիս:
64. Ի՞նչ տեսքով պետք է մոտենալ Ս. Հաղորդությանը:
65. Սկզբից տղամարդիկ, թե՛ կանայք պետք է մոտենան հաղորդվելու:

66. Ինչպե՞ս են հաղորդվում ձեռնադրություն և օծում ունեցող հոգևորականները, եթե նրանք պատարագիչ չեն:
67. Հոգևորականները նույնպես խոստովանում են Ս. Հաղորդություն ստանալուց առաջ:
68. Արդյո՞ք կարելի է քահանայից Ս. Հաղորդություն վերցնել և տուն տանել:
69. Ինչպե՞ս վարվել, երբ տանը հիվանդ կա, որը չի կարող Եկեղեցի այցելել, բայց ցանկանում է հաղորդվել:
70. Մտավոր հիվանդներին կարելի՞ է Ս. Հաղորդություն տալ:
71. Ի՞նչ այլ բացառություններ կան, երբ Ս. Հաղորդություն է տրվում Ս. Պատարագից դուրս:
72. Ի՞նչ է վերջին Ս. Հաղորդությունը:
73. Ս. Պատարագին պետք է մասնակցել սկզբից, թե՛ կարելի է նաև կեսից գալ:
74. Կարելի՞ է Եկեղեցուց դուրս գալ Ս. Հաղորդությունը ստանալուց հետո:
75. Ինչի՞ մեջ է պահում քահանան Ս. Հաղորդությունը Պատարագից դուրս հաղորդվողներին տալու համար:
76. Ի՞նչ է սկիհը:
77. Ի՞նչ է մաղզման:

78. Ս. Հաղորդության խորհրդի կատարման մեջ ի՞նչ ուրիշ տարբերություններ կան մեր Եկեղեցու և մյուսների միջև:
79. Ո՞վ է հաստատել բաղարջ հացով և անապակ գինով պատարագելու այս Սրբազան Ավանդությունը:
80. Ս. Գրիգորի կողմից այս Ավանդության հաստատման մասին ի՞նչ եկեղեցական կանոն է մեզ հասել:
81. Ինչպե՞ս են մյուս Եկեղեցիները հիմնավորում իրենց տեսակետը:
82. Ո՞րն է Վերնատան Ավանդության ընկալման մեր Եկեղեցու տեսակետը:
83. Ի՞նչ վկայություններ ունենք Վերնատան Ավանդության մասին մեր մատենագրության մեջ:
84. Ինչպե՞ս է մեկնաբանվել Տիրոջ կողից բխած արյունը և ջուրը մեր Եկեղեցում:
85. Ընդհանրական Եկեղեցու դր հայրերն են ավետարանական այս հատվածը մեզ նման մեկնաբանում:
86. Խնդրի վերաբերյալ ի՞նչ վկայություններ ունենք մեր մատենագրության մեջ:
87. Ի՞նչ աստվածաբանական հիմնավորում ունի անապակ գինի օգտագործելը:
88. Ինչո՞ւ ենք Ս. Պատարագի ժամանակ բաղարջ հաց օգտագործում:
89. Որո՞նք են բաղարջ հացի նախատիպերը Հին Ուխտում:

90. Այդ դեպքում ինչպե՞ս են բացատրում իրենց տեսակետը մյուս Եկեղեցիները, որոնք խմորյալ հաց են օգտագործում:
91. Ի՞նչ է խորհրդանշում բաղարջ հացը:
92. Ի՞նչ է խորհրդանշում խմորը Նոր Ուխտում:
93. Ավետարանական ի՞նչ այլ հիմնավորում են բերում մյուսները հօգուտ թթխմորի:
94. Ինչպե՞ս է վերագրյալ ավետարանական հատվածը մեկնաբանվել մեր Եկեղեցում:
95. Ե՞րբ է մեր պատմության մեջ առաջին անգամ արծարծվում բաղարջ հացի և անապակ բաժակի մասին խնդիրը:
96. Ե՞րբ է բաղարջի խնդիրը քննարկվում հույների և լատիների միջև:
97. Ինչո՞ւ կաթոլիկները Ս. Հաղորդություն չեն տալիս մանուկներին:
98. Ինչո՞ւ է Կաթոլիկ Եկեղեցին հավատացյալներին միայն մեկ տեսակով հաղորդում:
99. Ինչո՞ւ է մեր Եկեղեցում պատարագիչ քահանան օրհնում մեկ նշխար:
100. Հայոց Եկեղեցու անդամը կարո՞ղ է հաղորդվել այլ Եկեղեցում:

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀՎԱԲ

ՉԱՔԱՐԻԱ ԿԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՈՒՄՅԱՆ

100 ՀԱՐՑ
Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ

Սրբագրիչ՝ Ն. Գրիգորյան
Էջադրումը՝ Ղևոնդ քահանա
Մայիլյանի
Կազմը՝ Backbone Creative Studio

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷԶՄԻԱՇԻՆ - 2014

Չափը՝ 70x100 1/32, թուղթը՝ 80 գ.,
կազմը՝ փափուկ, 4 գույն, ծավալը՝ 108 էջ,
տպաքանակը՝ 1000:

ISBN 978-9939-0-1154-7



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ ՏՊԱՐԱՆ